№ 168 ՈՒՐԲԱԹ, 5 ՕԳՈՍՏՈՍԻ
1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՈՒՐԲԱԹ, 5 ՕԳՈՍՏՈՍԻ № 168

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торговъ. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Օգոստոսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 5 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Իւրիևվի Մասնաւոր Համալսարան. Դասընթացքների ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ
(Լուսաւորութեան Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող)

Ընդունվում են խնդիրներ 1911 թ. աշնանային սեմեստրի համար—բժշկական և բնագիտական ֆակուլտէտի I, II, III և IV կուրսերի և մաթեմատիկական ֆակուլտէտի I, II և III կուրսերի համար։ Դասընթացքների ծաւալը, կարգ ու կանոնը և ծրագիրը նոյնն են՝ ինչ որ Իւրիևվի համալսարանինը։ Ընդունվում են երկու սեռի անձեր։ Ուսման վճարը՝ բժշկական ֆակուլտէտի համար իւրաքանչիւր սեմեստրը 75 ռուբ., բնագիտական և մաթեմատիկական ֆակուլտէտների համար սեմեստրը 50 րուբլի։ Խնդիրները պիտի ներկայացնել վերատեսչի անունով (г. Юрьевъ. Лифл. г., Мельничная ул. № 1).

Սեպտեմբեր ամսից Դասընթացքներին կից բացվում է Ստոմատոլոգիական բաժանմունք համեալ դասընթացքով և համալսարանական ծրագրով—85 ր. իւրաքանչիւր սեմեստրը։

Դասընթացքների վերատեսուչ՝ պրոֆ. Մ. Ի. ՌՕՍՏՕՎՑԵՎ
(5,20) տռ. 611. 6—5

Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցում առաջիկայ ուսումնական տարում նորեկ աշակերտուհիների ընդունելութիւն կայ առաջին, երկրորդ, չորրորդ, հինգերորդ եւ եօթներորդ դասարաններում։

Խնդիրները, ծննդեան վկայականների (մետրիկաների) հետ պէտք է ներկայացնել մինչև օգոստոսի 25-ը։

Նորեկների քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 29-ին։ Դպրոցի սահմանված ձրիավարժների թիւը լրացած լինելով՝ այս տարի, դպրոցի հոգաբարձութեան կարգադրութեամբ, ոչ մի ձրիավարժ չի ընդունվի։

Ուսման թոշակները չորս աստիճանի են, տարեկան 10, 20, 30 և 40 րուբլի, որոնք կորոշէ դպրոցի վարչութիւնը։

Տեսուչ դպրոցի՝ ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ
(25, 15, օգ. 5) 671. 3—3

ԲԺԻՇԿ
Գ. Մ. ՂՈՂՈԲԵՐԻՁԷ
Ներքին ու կանացի հիւանդութիւնների
Հիւանդներին ընդունում է՝
երեկոյեան ժամը 5—7-ը։
Հասցէն՝ Кирпичная ул. № 16, տ. Սմիրնովի։
տռ. (Ե. Հ. Կ.) 756. 3-1

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

II

Ի՞նչ դիրք պէտք է բռնեն պարսկահայերը Իրանի այժմեան ճգնաժամի մէջ, այն րօպէին, երբ կատարվում է պատմական մի խոշոր դէպք, երբ երկու տարբեր ոյժեր և հոսանքներ—առաջադիմական և ռէակցիօնական—դէմ ի բռին պայքար են մղում իրար դէմ, իրար տապալելու նպատակով, երբ ներքին, եղբայրասպան կռիւ է ծագել, կռիւ, որ կարող է մատնել երկիրը ծայրայեղ թշուառութեան, քայքայման և աւերման և նոյն իսկ քաղաքական անկախութեան կորուսման։

Արդեօք հայերը Պարսկաստանում պէտք է չէզոք մնան, ձեռնպահ մնան թէ պէտք է ներգործական, ակտիվ մասնակցութիւն ունենան բորբոքված կռւի մէջ։

Որպէսզի կարողանանք խնդիրը անաչառօրէն և արդարացի վճռել, մեզ հարկաւոր է մի քիչ լուսաբանել Մահմէդ-Ալի նախկին շահի ներկայ արշաւանքը։

Մահմէդ-Ալի շահը, յաջորդելով իր հօր՝ Մուզաֆֆէր-Էդդինին, սկզբում տեղի տուեց պարսիկ ժողովրդի մէջ ծագած ազատագրական շարժման պահանջներին և հանդիսաւորապէս խոստացաւ տալ իր երկրին և ժողովրդին սահմանադրական իրաւունքներ և ազատութիւն։ Դժբաղդաբար, շրջապատված լինելով անարժան և շահամոլ խորհրդականներով, ինքն էլ չունենալով քաղաքական և մտաւոր բարձր ընդունակութիւններ, նա շուտով դրժեց իր խոստման և աշխատեց յետ վերցնել ժողովրդին տրված իրաւունքները և վերահաստատել նախկին բռնապետական ռէժիմը։ Այդ ձեռնարկը նրան շատ թանգ նստեց. նա կորցրեց գահը և ստիպվեց թողնել Պարսկաստանն ու, իբրև աքսորական, ապրել օտար երկրում։

Նրա հեռանալուց յետոյ այլևս ոչ մի խոչընդոտ չը կար և չեղաւ սահմանադրական ռէժիմի հաստատվելուն՝ Պարսկաստանի մէջ։ Հաստատվեց մէջլիսը, իբրև պարլամենտ, հաստատվեց պատասխանատու մինիստրութիւն, և երկրի ամբողջ կառավարութիւնը անցաւ մէջլիսի ձեռքը։ Ժողովուրդը գոհունակութեամբ ընդունեց Մահմէդ-Ալի շահի գահընկէցութիւնը, համոզված՝ որ [illegible] բան և հայրենիքին բարօրութիւն, տնտեսական բարգաւաճում, անհատական ազատութիւն, խղճի ազատութիւն, կեանքի, գոյքի, պատւի ապահովութիւն, անձի անձեռնմխելիութիւն, տուրքերի և հարկերի թեթևացում, առևտրի և արդիւնաբերութեան զարգացում։

Եւ եթէ նոր, սահմանադրական ռէժիմն ու այն անձինք, որոնք անցան նոր կառավարութեան գլուխը, կարողանային գէթ տասներորդ չափով իրագործել այն բարիքները, որ ժողովուրդը սպասում էր նոր ռէժիմից և Մահմէդ-Ալի շահի գահընկէցութիւնից, եթէ նոր ռէժիմի կառավարութիւնը կարողանար գոնէ հաւատ և յոյս ներշնչել ժողովրդի մէջ, թէ գէթ մօտիկ ապագայում կիրագործվեն այդ բարիքները, ոչ մի տարակոյս չը կայ, որ Մահմէդ-Ալիի համար ոչ մի հող չէր պատրաստվի և նա ոչ մի կերպով չէր յանդգնի երկնել արշաւանքի միտքը։

Եւ դժբաղդութիւնը հէնց նրա մէջն է, որ նոր ռէժիմը ոչ միայն չը կարողացաւ հաւատ և յոյս ներշնչել, այլ և այնպէս յոռի կերպով վարեց գործերը, կառավարեց երկիրը, որ բովանդակ պետութեան մէջ տիրեց կատարեալ անիշխանութիւն, առաջ եկաւ տնտեսական, արդիւնաբերական, առևտրական քայքայում, աւազակութիւնները, կողոպուտները, թալանները շատացան և ժողովրդի վրա նորանոր ծանր հարկեր, տուրքեր դրվեցին, նոյնիսկ տուրքեր այնպիսի կենսական նիւթերի վրա, որոնց տուրքի ենթարկել, ըստ շարիաթի, խստիւ արգելված է, ինչպէս տուրքը՝ աղի վրա։

Եւ պարսիկ ժողովուրդը եկաւ այն եզրակացութեան ու համոզման, թէ նրա դրութիւնը հին, բռնապետական ռէժիմի օրով աւելի թեթև էր, աւելի լաւ, քան այժմ, երբ մի բռնակալ շահի փոխարէն՝ հարիւրաւոր փոքրիկ բռնակալ շահեր են հաստատվել երկրի զանազան անկիւններում։

Նոր, սահմանադրական ռէժիմը չը կարողացաւ իր միջից արտադրել փոքր ի շատէ նշանաւոր ոյժեր, որոնք ունենային վերանորոգչական ձիրք, ընդունակութիւն և որոնք կարողանային սահմանադրութեան տարրերը գոնէ հաստատել երկրում. ընդհակառակը, նոր ռէժիմը սկսեց դիմել հին ռէժիմի գործիչների օգնութեանը և աջակցութեանը։

Եւ ահա դժգոհութիւնը սկսեց ծայր տալ. գնալով գնալով սաստկացաւ, սկսեց ստուարանալ հին ռէժիմի կողմնակիցների թիւը, և յղացվեց միտքը յետ կանչել Մահմէդ-Ալի շահին։ Սա էլ խրախուսվեց և, գտնելով նաև արտաքին օգնութիւն, յղացաւ արշաւանք սկսելու և իր գահը նորից զինու զօրութեամբ նուաճելու միտքը։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

3 օգոստոսի

Բերլին.—Քաղաքական շրջաններում յայտնում են, որ կառավարութիւնը երբէք ծայրայեղ լաւատեսութեամբ չէ վերաբերվել դէպի Մարոկկօյի նկատմամբ կատարվող բանակցութիւնները, թէև չէր կարծում, թէ բէր բանակցութիւնները անաջողութեան կը հանդիպեն։ Այժմ խօսքը այն մասին է, որպէսզի հաստատուն նպաստաւոր պայմաններ ստեղծվեն ֆրանս-գերմանական յարաբերութիւնների համար նրանց ատլանտեան հողերում։ Ֆրանսիան անհամեմատ աւելի շահագրգռված է հարցի բարեյաջող լուծման մէջ, քան Գերմանիան, որովհետև 1911 թ. վերջը լրանում է Ֆրանսիայի լիազօրութիւնների ժամանակը Մարոկկօյում։ Այդ պատճառով Ֆրանսիան պէտք է առաջինը յայտարարէ, թէ ինչ է առաջարկելու իր հզօրութիւնը Հիւսիսային Աֆրիկայում տարածելու համար։

—

Բելգրադ.—Քաղաքը զարդարվում է և պատրաստվում է շքեղ ընդունելու Մեծ Իշխան Իօան Կօնստանտինովիչին, որ տեղս է հասնելու երեկոյեան ժամը 6-ին։

—

Բելգրադ.—[illegible] Կօնստանդինովիչը, որին կայարանում ընդունեցին թագաւորական ընտանիքը, իշխանութիւնները, ռուսական միսիայի անդամները։ Ազգաբնակութիւնը սրտանց ողջունեց բարձր հիւրին,

—

Բուդապեշտ.—Պատգամաւորների պալատում Ժիւէրֆիի հարցապնդմանը մինիստր-նախագահը պատասխանեց, որ նրան ոչինչ յայտնի չէ զինուորական մինիստրի հրաժարականի մասին։ Զինուորական օրինագծերի ընդունման առիթով մինիստր-նախագահը ասաց, որ այդ ընդունումը պէտք չէ վերագրել զինուորական մինիստրին, և վերջում խորհուրդ տուեց ընդունել օրինագծերը ըստ հնարաւորութեան շուտով։

—

Բուդապեշտ.—Նովիսադում կալանաւորվեց այն գանձապահը, որ Մատիցում վատնել էր սերբիական կէս միլիօն կրօն։

—

Զագրէբ. — Սօկօլների կօնգրէսը փակվեց։ Ճաշին քաղաքագլուխ Գորեաչը արտասանեց սրտալի մնաս բարևի ճառ։ Երեկոյեան կայացաւ մնաս բարևի ընթրիք, ուր առանձնապէս սրտագին պատիւներ ընկան բօլգարների բաժին։ Սերբ սօկօլները ձեռնպահ մնացին։ Սօկօլների հետևեալ համագումարը տեղի կունենայ Պրագայում 1912 թ. յուլիսի 4-ին։

—

Պարիզ.—Հավասի գործակալութիւնը հաղորդում է, որ ֆրանսիական դեսպան Կամբօնը և գերմանական արտաքին գործերի ստատս սեկրետար Կիդերլէն-Վեխտէրը երէկվայ զրոյցի ժամանակ քննել են այն հիմունքները, որոնց իմաստով կարող են վարվել ֆրանս-գերմանական բանակցութիւնները։ Քաղաքական շրջաններում դրանից հետևցնում են, թէ մտքերի նախկին փոխանակութիւնը լուրջ արգասիքներ չէ ունեցել։

—

Շուշի.—Պարսիկ մի աւազակախումբ, 60 հոգուց բաղկացած, գիշերը անցաւ Արաքսով, քարուքանդ արեց Զախուրլու գիւղը, երկու մարդ գերի տարաւ։

ԳՈՐԾԱԴՈՒԼ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

3 օգոստոսի

Լոնդոն.—Շեֆֆիլդ վիճակում գործադուլ արին երկաթուղային բոլոր գծափոխողները։ Թէև ուրիշ տեղերից ծառայողներ ուղարկվեցին, բայց և այնպէս գնացքների երթևեկութիւնը բաւականին կրճատվել է։

Կառավարութեան բանակցութիւնները երկաթուղային ընկերութիւնների հետ՝ հետևանքներ չունեցան։ Երկիւղ են կրում որ անմիջապէս կը վերսկսվի ընդհանուր գործադուլը։ Մանչեստէրում երթևեկութիւնը դադարել է։ Գլազգօյում տեղի են ունեցել անկարգութիւններ նաւաշէն բանւորների շրջանում։

—

Լիվէրպուլ.—Երկաթուղային ծառայողների միտինգին որոշվեց յայտարարել ընդհանուր գործադուլ ամբողջ երկրում, եթէ երկաթուղային ընկերութիւնները 24 ժամում պատրաստակամութիւն չը յայտնեն բանակցութիւններ սկսելու երկաթուղային ծառայողների ներկայացուցիչների հետ։

3,000 մարդուց բաղկացած ամբոխը յարձակվեց բանտարկեալներ տանող կառքին ուղեկցող հեծելազօրի վրա։ Զինուորները կրակ բացին և վիրաւորեցին 20 հոգու և սպանեցին մինին։

Ջրաղացպանները յայտնեցին քաղաքապետին, որ եթէ արդի դրութիւնը տևէ մի քանի օր էլ, այն դէպքում քաղաքն առանց հացի կը մնայ։ Առանձնապէս ուտելիքի մեծ կարիք է զգացվում հիւանդանոցներում։

Գործադուլային շարժումը տարածվում է ամբողջ երկրի վրա։

—

Մանչեստէր.—Գնացքները համարեա չեն երթևեկում։ Արուարձանների բնակիչները տուն վերադարձան ոտով։ Ուտելիքի քանակութիւնը սահմանափակ է։ Կրպակատէրերը օգնութեան համար դիմեցին ներքին գործերի մինիստրին։

—

ծաթող բանւորների թիւը 1,500 է։

Ազգաբնակութիւնը մեծ կարիքի մէջ է։ Նեգր նաւաստիները ձեռնակռիւ սկսեցին ոստիկանութեան հետ, որ գործի հանեց ձեռնափայտեր։ Հիւանդանոց տարվեցին 12 վիրաւոր նեգրեր։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

3 օգոստոսի

Ուրմիա.—Շէյխ-Աբդուլ-Կադըրը ճառ արտասանեց մանդուր ցեղի պարագլուխների ներկայութեամբ և ապացուցեց, թէ քիւրդերը պէտք է թողնեն աւազակային կեանքը և դպրոցներ բանան։

Սահմանադրական շարժման նախկին գործիչները, գալով Ուրմիայի նահանգապետի մօտ, յայտնեցին, որ կամենում են ցոյցերով իրանց ատելութիւնը յայտնել էկս-շահին։ Նահանգապետը, օրինակ բերելով ծանր ժամանակը և Ուրմիայի բացառիկ կացութիւնը, իբրև սահմանային կէտի, խնդրեց խուսափել ցոյցերից։

Աւազակ Մամէդ-Իմինը յարձակվեց Բալիսան գիւղի տիրոջ հացահատիկի պահեստի վրա։ Վերջինիս մարդիկ ցոյց տուին դիմադրութիւն։ Կռւի մէջ գիւղը կորցրեց երեք սպանված, մի վիրաւոր և մի քանի գերի։

Խօյից հաղորդում են, որ աւազակ քիւրդ Շիւքիւր-Աղան կողոպտել է ռուսական հպատակին պատկանող գիւղը։ Քշել են 15 եղջիւրաւոր անասուն և 6,000 ոչխար։

Սալմաստից հաղորդում են, որ Սըմկօ-բէկը և Թէմիրջանկօն կողոպտել են 4 գիւղեր, վիրաւորել են մի մարդու, սպանել են երկու պարսիկ ձիաւորների։ Դիլման քաղաքում կողոպտված են երկու տուն։

Պատասխանելով Նէջէֆի մուջտէիդների հեռագրին, որոնք էկս-շահին անուանել էին անհաւատացեալ մահմէդական և հայրենիքի թշնամի, նաև Գիլանի անջումանի և Թէհրանի վաճառականութեան հեռագրերին, տեղական անջումանը յայտնեց, որ Ուրմիայի ազգաբնակութիւնը պատրաստ է արեան մինչև վերջին կաթիլը պաշտպանել սահմանադրութիւնը։

Պետ. Հեռ. Գործ. Թղթակցի հետ խօսակցելիս՝ մի աչքի ընկնող անձն յայտնեց, թէ վերջերս, երբ մեծ պետութիւնները զբաղված են Պարսկաստանի դէպքերով և մասամբ մարոկկեան հարցով, թիւրքերը աննկատելի կերպով ամրանում են պարսկական հողի վրա, գրաւելով նորանոր կէտեր և ուժեղացնելով իրանց զօրախմբերը։

Տեգերար շրջանում պարսկական հողի վրա թիւրքերը կառուցել են մի զօրանոց, որ իր մէջ կարող է պարփակել մի վաշտ։ Պարսկական քիւրդ պարագլուխների մէջ շէյխ Աբդուլ-Կադըրը հանգանակութիւն է սկսել դպրոցներ բանալու համար, ուր դասաւանդումը լինելու է թիւրքերէն։ Հանգանակութիւնը շատ աջող է առաջ գնում։

—

Թէհրան.—Սալար-ուդ-Դովլէի առաջաւոր գունդը գիշերը առանց կռւի գրաւեց Համադանը։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

3 օգոստոսի

Լոնդոն.—Ռէյտէրի տեղեկութիւնների համաձայն, անգլիական հակառաջարկութիւնները Բաղդադի երկաթուղու և մաքսային պայմանադրամների աւելացման վերաբերմամբ՝ յուլիսի կէսերին յանձնվել են Լոնդոնում պաշտօնավարող թիւրքաց դեսպանին։ Անգլիան պնդում է, թէ անհրաժեշտ է կարգաւորել ֆինանսական կողմը միջազգային հիմունքով Անգլիայի մասնակցութեամբ։ Անգլիան երաշխաւորութիւն է պահանջում, որպէսզի Բաղդադի երկաթուղին չը վնասէ անգլիական շահերին։ Գծի վախճանական կէտը անգլիական պատասխանագրում չէ յիշատակված։

—

Կ. Պօլիս.—Բանակցութիւնները Եմէնի Իմամ-Եահիայի հետ մօտենում են իրանց վախճանին։ Եահիան ըստ երևոյթին կը ճանաչվի [illegible]

Արգիրօկաստրօյի մօտերը տեղի ունեցաւ ընդհարում ալբանական հրոսակախմբի և զօրքերի միջև։ Երկու կողմերն էլ ունեցան խոշոր կորուստներ։

Պոդգօրիցայի մօտերը չէրնօգօրցիների հրոսակախումբը ալբանների հետ անցնելով սահմանը ընդհարվեց թուրք զօրքերին և յետ մղվեց խոշոր կորուստներով։

Այն ոստիկանական կոմիսարը, որ չարչարել էր յունական հիւպատոսարանի ծառայող Կօդօյեանիսին, արձակվեց պաշտօնից։

Զօրքերը Չէրնօգօրիայի սահմանից աստիճանաբար շարժվում են դէպի Յունաստանի սահմանները։

—

Սալոնիկ. — Ենիջէի շրջակայքում զօրքերի հետ ընդհարվելիս սպանվեցին յայտնի բօլգարացի զօրական Ապօստօլը, որին անուանում էին «Վարտարի արև», և Զագանչև ու Բուվկա մարտիկները։ Նրանց հայդուկները ցիրուցան եղան։ Բօլգարական հրոսակախմբերը գործում են յոյների և ալբանների հետ միասին։

—

Ուսկիւբ.—Մի բօլգարական հրոսակախումբ կախել է երկու բօլգար քահանայի՝ ժողովրդական գործին դաւաճանելու համար։

—

Մօնաստիր.—Կառավարութիւնը յամառ կռիւ յայտարարեց հայդուկային շարժման դէմ։

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Ազգային ժողովը ուրբաթ օր (յուլիս 15-ին) կրցաւ գտնել 71-ի մեծամասնութիւնը և իր կարևորագոյն գործն եղաւ ընտրել Քաղաք. ժողովոյ պակասեալ չորս անդամներ։ Քուէներու ստուար մեծամասնութեամբ նոյն ժողովոյ անդամ ընտրուեցան, տիարք՝ Աբրահամ Տէր-Յակոբեան, Վարդգէս Սերէնկիւլեան, Վահան Փափազեան, և Տիրան Երկանեան։

Ուրիշ կարևորագոյն խնդիր մը եղաւ որոշել, թէ Ազգ. Ժողովը ի՛նչ ձևով պէտք է մասնակցի ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան։ Զանազան առաջարկներ եղան։ Դքթ. Թիւլեան առաջարկեց, որ միայն Պոլսոյ երեսփոխանները կատարեն աշխարհական պատուիրակի ընտրութիւնը, կամ ուղղակի Ժողովուրդը կատարէ։ Խօճասարեան էֆ.-ի առաջարկն էր՝ վերադառնալ հին ձևին, այն է բոլոր գաւառի առաջնորդներուն կարծիքն առնել, և յետոյ Ազգ. Ընդհ. Ժողովոյ մէջ ալ քուէարկել և այս քուէարկութեան արդիւնքը պարտաւորիչ դարձնել գաւառի պատուիրակներուն. հակառակ պարագային հրաժարիլ ընտրութեան ուղղակի միջամտելէ, և Պոլսոյ պատուիրակին ընտրութիւնը թողուլ կամ վարչութեան, կամ Թաղ. խորհրդոց ատենապետներէն կազմուած մարմնոյ մը։ Վահան էֆ. Թէքէեան ըսաւ, թէ Թիւրքահայոց մասնակցելու ձևը պէտք է Ազգ. Ժողովը ինք որոշէր, և թէ Ազգ. Ժողովը պէտք է խօսի ընտրելիներու մասին և մանրա տայ ընտրուած պատգամաւորներին, որ բարոյական ազդեցութիւն մը կրնայ ունենալ գաւառաց վրայ ալ։ Պալաքեան վրդ. պնդելով հանդերձ հնար եղածին չափ մեծ ձայնով ընտրութեան մասնակցելու պէտքին վրայ, համամիտ չվանուեցաւ ընտրելիները պարտաւորիչ ընելու առաջարկին, որովհետև երաշխաւորութիւն չկայ, թէ գաւառաց պատգամաւորները պիտի յարգեն Ժողովին որոշումը։

Մեծ ուշադրութեամբ լսուեցան տեղապահ սրբ. հօր բացատրութիւնները՝ Պօլօժենիայի հաստատումէն ի վեր—Ազգ. Սահմանադրութենէն առաջ և ետքը—կատարուած ընտրութիւններու մասին։ Շեշտեց ան կէտը, թէ ռուսահայք, հակառակ իրենց մէկ ու կէս միլիոն բնակչութեան, 18 քուէ միայն կուտան, որոնց վեցը Էջմիածնի միաբաններուն է։ Յիշեց, թէ ռուս կառավարութիւնը մերժեց Թիւրքահայ երկու պատգամաւորներու 140 ձայն ներկայացնելու իրաւունքը, առանց սակայն բեկանելու Գէորգ Դ.-ի ընտրութիւնը։ Ի պատիւ սինոդին յայտարարեց, թէ անիկա միշտ յարգած է Ազգ. Ժողովին իրաւասութիւնը, և ռուսահայք ջանացած են միշտ գոհացում տալ Թիւրքահայոց և մաքառած են պետութեան կարգադրութեանց դէմ։ Ռուս կառավարութիւնն և սինոդը չեն ճանչնար Պօլօժենիայով որոշուածէն տարբեր կերպ. մանաւանդ որ հիմա պարագաները փոխուած են, և ռուսահայք իրենք կուզեն ըլլալ ազդեցիկ։ Հետևապէս Ժողովը որոշում տալէ առաջ պէտք է մտածէ և այնպիսի ձևը մը տայ, որ սինոդը ռուս կառավարութեան աչքին դժուարութեան չենթարկուի։

Տեղապահ սրբազան ի վերջոյ փափաք յայտնեց, որ ոչ միայն աշխարհական, այլև եկեղեց. պատգամաւորն Ազգային Ժողովն ընտրէ։

Դաւիթ Տ.-Մովսէսեան էֆ. կարծիք յայտնեց, թէ ազգային բանաբարուած իրաւունքի մը ձևով ներկայացուած այս խնդիրը կարծուածին պէս չէ, և թէ հայ եկեղեցւոյ ընտրողական կարգը խանգարուած չէ։ Մ. Կիւրճեան էֆ. շեշտեց, թէ ընտրութիւնը պիտի կատարուի ռուսական հողի վրայ, և փոքր շեղում մը ընել կարելի չէ։ Հուսկ ուրեմն առաջարկը, որով կորոշուի հին ձևը պահելով նոյն պայմաններով կատարել ընտրութիւնը։

Ազգ. Ժողովոյ նոյն նիստին, ատենական գործողութեանց միջոցին, Վահան էֆ. գրաւորապէս ներկայացուց իր ամբաստանութիւնը, որով կը նկատէր Օրմանեան սրբազանը իբր ռուսահայոց կենտր. Ժողովին փակման պատճառ, հիմնուելով Դաշնակցութեան դատին համար Լէժինի պատրաստած ամբաստանագրին վրայ։ Երկարապատում կարծիքներու փոխանակութենէ մը ետքը, թէ այս առաջարկը հին յանձնաժողովին պէտք է ղրկել, նոր յանձնաժողով մը պէտք է կազմել, թէ Ատենապետաց Դիւանին պէտք է յանձնել, հուսկ ուրեմն 29-ի դէմ 30 ձայնով որոշուեցաւ Ատենապետաց Դիւանին յանձնել։

(«Տաճար»)

ԱՐՓԻԱՐԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

—

Յուլիս 16-ին Մարմինայի գերեզմանատան մէջ (Կահիրէ) տեղի ունեցաւ բացումը գաղափարի զոհին՝ Արփիարի մահարձանին, վեհաշուք հանդիսաւորութեամբ։

Յիշատակարանին շուրջ հաւաքուած էին Կահիրէի բոլոր մտաւորականութիւնը, գաւառական և քաղաքական ժողովներուն անդամները, ուսուցչական մարմինը, Արփիարի խմբագրած «Լուսաբեր-Արև» լրագրին խումբն և բազմաթիւ համակիրներ։ Թափօրը կազմուեցաւ գերեզմանատան մատուռին առջև, քահանաներու և դպիրներու առաջնորդութեամբ, որոնց կը հետևէր հետզհետէ համախումբ՝ ծառերու տակ զրուած ժողովուրդը։ Հոգեհանգստեան արարողութիւնը կատարուելէ վերջ, երբ Մամբրէ քահանայ յուշարձանին չորս կողմերն օրհնեց։ Յուշարձանը ծածկուած էր սև շղարշով մը։ Վահան Մալէզեան, յանուն յանձնախումբին և առ հասարակ Արփիարի հիացողներուն, խիստ սրտառուչ բացման ճառ մը խօսեցաւ։ Երբ «վար առէք այս սև ծածկոյթը» գոչեց, քանդակագործ Յ. Պէշիրճեան քակեց շղարշին կապը, և ծածկոցն իյնալով յուշարձանն երևցաւ ձիւնասպիտակ գեղեցկութեանը մէջ փառաւոր։ Բոլոր նայուածքներն սփոփարար շղաւորումի մէջ ճանաչեցան։ Այդ միջոցին Կարօ Պալեան, յանձնախումբին կողմէ, մետաղեայ տերևներով ու յախճապակեայ ծաղիկներով հիւս պսակ մը դրաւ մահարձանին ոտքը։ Յետոյ խօսեցան Յ. Սեթեան՝ յանուն հայ գրագէտներուն, և Յ. Արգլանեան յանուն հայ մամուլին, և ի մասնաւորի «Լուսաբեր-Արևի»։ Զգացումով լեցուն այս երկու ճառերն ալ յուզեցին ներկաները։

Յուշարձանը, որ շինած է Յ. Պէշիրճեան, կը բաղկանայ չորս մասէ. նկուղ մը, 3 մէտր խորութեամբ, ուր փոխադրուեցան աճիւնները՝ վերջին տարելիցին օրը. պատուանդանը՝ հաստակազմ պարթենոնեան մարմարէ՝ երկյարկ. կոթող մը՝ երկուքուկէս մէտր բարձրութեամբ, որուն վրայ արձանագրութիւններ, և վերջապէս կիսանդրին՝ որուն մէջ համակրելի արուեստագէտը յաջողած է դնել կարելի նմանութիւնը։ Ամբողջ գործն իր պարզութեան մէջ վեհաշուք է։ Այդ առթիւ հրապարակ հանուած է յուշատետր մը՝ յանձնախումբին կողմէ հրատարակուած, որ Արփիարի ամենէն հաւատարիմ մտերիմներէն Վահան Մալէզեանի աշխատութիւնն է գրեթէ ամբողջովին։ Կը վաճառուի հատը 1 ֆր.-ի, և արդիւնքով հետզհետէ պիտի տպագրուին ողբացեալ գրագէտին գործերը։

(«Լուսաբեր-Արև»)

ՃԱՆԱՊԱՐՀԻՑ

I

Լօզանի համալսարանի ընթերցարանը

Լօզան, 6 օգոստոսի (ն. տ.)

Օգտվելով դպրոցական արձակուրդից, կամեցայ, սրտով կամեցայ անցնել Ռուսաստանի և արտասահմանի մի քանի քաղաքներ, մի թեթև ճանապարհորդութիւն կատարելու և խանգարված առողջութիւնս վերականգնելու նպատակով։

Ինձ ուղեկցում էին երկու օրիորդներ։

Подволочискъ կայարանից մինչև Վիէննա և այնտեղից մինչև Լօզան հարուստ է իմ ճանապարհորդական յիշողութիւնները սիւրպրիզներով և արկածներով։

Ինչ և է, այսօր Շվեյցարիայի Լօզան քաղաքումն եմ, Ժընեվ լճի ափին, որի ջուրը, ի դէպ ասեմ, ջինջ է, մաքուր և բաց կապտագոյն։ Հաճելի է նայել, ու շարունակ նայել։ Եղանակը հրաշալի է և հրապուրիչ։ Բազմաթիւ մակոյկներով զբօսնողներ կան լճի գեղածիծաղ տարածութեան վրա։ Բազմութիւնը դիմաւորում է լճը ակօսող և մանչերանով առաջ սահող շոգենաւերին, իսկ մանուկները թռչկոտում, վազվզում և խաղում են կամուրջի վրա՝ իրանց դաստիարակչուհիների հետ։ Դրանք և քաղաքի նման երևոյթները ինձ չէին մագնիսում. ես շտապեցի լրագրավաճառների քիոսկները, որ հայերէն և ռուսերէն լրագիրներ վերցնեմ, որովհետև յուլիսի 9-ին դուրս գալով Կովկասից՝ ոչ մի տեղեկութիւն չունեմ, թէ այնտեղ ինչ է կատարվել և ինչ է կատարվում։ Գտայ «Новое Время», «Рѣчь», և «Русское Слово» ռուսաց թերթերից, իսկ հայերէնից՝ և ոչ մինը։

որ համալսարանը ընթերցարան ունի և ես կարող եմ օգտվել նրանից։ Ամսիս 1-ին, ուսանող Ռ. Չիլինգարեանի սիրալիր խորհրդով և նրա տուած հասցէով, գնացի, որ գտնեմ ընթերցարանը։

Զանգահարեցի, դուրս եկաւ մի պարզ, շատ մաքուր հագնված օրիորդ և համեստութեամբ բարևեց ինձ։

— Je veux lire les journaux,—ասացի և տուի նրան այցետոմսս։

Օրիորդը իսկոյն և եթ առաջնորդեց ինձ համալսարանի ընթերցարանի դահլիճը, որի դրան ճակատին խոշոր տառերով գրված է. «Salle de lecture». Օրիորդը ցոյց տուեց ինձ ռուսաց լրագիրների շարքը և դրեց սեղանիս վրա մի երկու հայ թերթեր ու դուրս գնաց։

Սա մի մեծ դահլիճ է, ուր դրված են զոյգ-զոյգ փոքր սեղաններ, շրջապատած չորս-չորս գեղեցիկ աթոռներով։ Սեղանների վրա ոչինչ չը կայ։ Բոլոր լրագիրները, թւով մօտ քառասուն, կախված են դահլիճի երեք պատերի վրա օղակներով, փայտերի վրա պինդ քանոնով պնդացրած, իսկ ամսագրերն ու շաբաթաթերթերը, առանձին-առանձին ստուարաթուղթ կազմերի մէջ, ժապաւէններով օղակների մէջ կապած, շարված են, դրանց համար յատուկ շինված, աստիճանների (полка) վրա և կրում են «Université de Lausanne, Salle de lecture» կնիքը։

Ստացվում են ռուսաց հրատարակութիւններից՝ «Новое Время», «Русское Слово», «Рѣчь», «Вѣстникъ Европы», «Русское Богатство» և այլն, իսկ ֆրանսերէն և գերմաներէն՝ «Journal des Débats», «Le Figaro», «Le Temps», «Le Matin», «Kölniche Zeitung» և այլն։ Ստացվում են և բաւական թւով պատկերազարդ հրատարակութիւններ։ Ընթերցարանը բաց է առաւօտեան ժամը 9-ից մինչև երեկոյեան ժամը 9-ը։

Ուսանողը, ընթերցարանի դահլիճը մտնելուն պէս, իսկոյն գլխարկը և ձեռնափայտը դնում է իր որոշեալ տեղը և, նայելով պատերի վրա կախված լրագիրների շարքին, կամ աստիճանների վրա շարած ամսաթերթերին, վերցնում է՝ որը կամենում է և, սեղանի մօտ նստելով, կարդում է, առանց սրա և նրա հետ քչփչալու։

Քանի մի օր այցելելով ընթերցարանը, ես ոչ մի ուսանող չը տեսայ ծխախոտ ծխելիս։ Ծխախոտի փոխարէն՝ ես տեսնում էի նրանց ձեռքին մատիտ և թուղթ։ Այդ հանգամանքը ինձ համար շատ հետաքրքրական էր, և ես սկսեցի նայել պատերի վրա, կայ, արդեօք, մի հրահանգ, մի յայտարարութիւն, որով ծխելը արգելվում լինի։ Ո՛չ մի խօսք այդ մասին։ Սա օրինակելի դիսցիպլինա է։

Գ.

ՄԻ ՀԱՅ ՇԱՆՏԱԺԻՍՏ

—

Վերջերս Քէօսթէնճէի ծանօթ հայ վաճառականներէն Գր. էֆէնտի Մանիսալեանի կը ներկայանայ խիստ վայելուչ հագուած երիտասարդ մը և կըսէ, թէ Մանթաշեանցի որդին է և պտոյտի ելած է։ Մանիսալեան էֆէնդին մեծ պատիւներ կընէ մեծահարուստ ռուսահայ բարերարին որդւոյն։ Խօսակցութեան միջոցին, շանտաժիստը կը հարցնէ, թէ ուրիշ հարուստ հայ վաճառական կա՞յ Քէօսթէնճէի մէջ։ Մանիսալեան էֆ. կը յայտնէ, թէ Մկրտիչ էֆ. Թուէնկեանը կայ, որուն անմիջապէս հեռաձայնով կը հաղորդէ Մանթաշեանցի որդւոյն ժամանումը և իրեն հետ տեսակցելու փափագը։ Թուէնկեան էֆ. կը պատասխանէ, թէ մեծ պատիւ կը համարի այս այցելութիւնը։

Պ. շանտաժիստը անմիջապէս կը փութայ Թուէնկեան էֆ.-ի վաճառատունը և մեծ պատիւներով կընդունուի։ Վայելչագեղատ հիւրը գրպանէն կը հանէ կարգ մը կեղծ չէկեր և կը խնդրէ, որ 1000 ֆր.-ի փոխառութիւն մը ըլլայ իրեն, զոր պիտի հատուցանէր միւս օր, բանքային դրամը առնելուն պէս։ 1000 ֆր.-ը անմիջապէս կը յանձնուի և պ. «Մանթաշեանց» շնորհակալութիւն յայտնելով կը մեկնի, յաջորդ օր գալու խոստումով։ Շանտաժիստը ուղղակի կերթայ Օվիդիօ զբօսարանը, ուր կը ծանօթանայ քանի մը ռումէն զօրականներու, և անոնց կը յայտնէ, թէ ինքը ռուս ազայ մըն է։ Շամպանիա բերել կուտայ և կը սեղանէ ռումէններուն։ Այս միջոցին Թուէնկեան էֆ. հեռաձայնով կը հարցնէ Օթէլ Ռէնէի տնօրէնին, թէ իր յաճախորդներէն Մանթաշեանց հո՞ն կը գտնուի։ Պատասխան կը ստանայ, թէ այդ անունով յաճախորդ չկայ օթէլին մէջ։ Թուէնկեան էֆ. կը կասկածի և իմաց կուտայ ոստիկանութեան, որ նոյն երեկոյին Քէօսթէնճէէն մեկնող կառախումբին մէջ կը ձերբակալէ շանտաժիստը և անցագիրը քննելով կը հասկնայ, թէ իբր Մանթաշեանցի որդի ներկայացող անձը բնիկ բագուեցի Երուանդ Տիգրանովիչ անուան մէկն է։ Վրայէն կը գտնուի 800 ֆր., որ կը յանձնուի Թուէնկեան էֆ.-ի։ Միւս 200 ֆր.-ը զբօսարանին մէջ ծախսած էր։ Տիգրանովին երեք ամիս բանտարկութեան դատապարտուած է։ Հաւանական է, որ այս շանտաժիստը Պոլիս ալ գայ, ուստի աւելորդ չէ իր դէմքին նկարագրութիւնը ընել։ Խաբեբան հազիւ 30 տարեկան է, երկայնահասակ, բաւական լղրճենկեկ, սև բեխերով, ակնոցաւոր և շատ շիկ հագուած։ Ռումէն թերթերը հրատարակած են անոր [illegible]

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆՈՐ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ

—

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Ղարաբաղի թեմի վանքապատկան ահագին կալուածների յուր կառավարութիւնը Աշոտ եպիսկոպոս Շախեանի և նրա նախորդների օրով այն արդիւնքն է արտադրել, որ այդ կալուածների պետական տուրքերից ապառիկ է գոյացել մի պատկառելի գումար, մօտ 50,000 ր., քանի որ տուրքերը ժամանակին չը վճարելով՝ տուգանքները բարդվել են տարիների ընթացքում։ Կառավարչական պաշտօնական իշխանութիւնները կարգադրել են խստիւ պահանջել և գանձել այդ յետամնաց ապառիկ տուրքերը։ Եւ որովհետև ոչ Ղարաբաղի թեմական, ոչ էջմիածնի գանձարանները կարող չեն վճարել այդպիսի մի մեծ գումար, ուստի կառավարութիւնը որոշել է աճուրդով ծախել կալուածները։ Եւ, անշուշտ, աճուրդի ժամանակ միլիոններ արժող կալուածները պէտք է չնչին գումարով ծախվեն և հայոց եկեղեցին պէտք է զրկվի իր մի նշանաւոր և պատմական սեփականութիւնից, որպիսին հանդիսանում են Գանձասարի, Ամարասի և Խօթայ վանքերի կալուածները։ Վերջապէս, էջմիածնի սինոդը, այդ ահագին վտանգի ազդեցութեան ներքոյ, սթափվելով՝ որոշել է միջնորդութիւն յարուցանել Կովկասի Փոխարքայի միջոցով Թագաւոր Կայսրի առաջ, խնդրելով որ յետամնաց 50,000 ր. տուրքի վճարումը յետաձգվի և բաժանվի որոշ թւով տարիների վրա, քիչ-քիչ վճարվելու պայմանով։ Մեծ յոյս կայ, որ, շնորհիւ Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովի, սինոդի միջնորդութիւնը արժանանայ կայսերական բարեհաճութեան։

Սինոդի այդ քայլը թէև ուշացած, բայց արժանի է գովասանքի։ Եւ առհասարակ սինոդը և ներկայ տեղապահը ահագին ծառայութիւն մատուցած կը լինէին հայոց եկեղեցուն, եթէ կարողանան գոնէ կալուածական խնդիրը կարգաւորել և ազատել ազգային-եկեղեցա-վանական կալուածները գիշակերների ձեռքից ու ռացիոնալ շահագործման հողի վրա դնել նրանց։

Հ. Ա.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Շուշի, 1 օգոստոսի

Յուլիսի 30-ին՝ գիշերով, Մեղրեցոց եկեղեցու նրբանցքում աւազակները, թւով 5 հոգի, յարձակվել են եղբ. Տէր-Մկրտչեանների տեղիս կառավարիչ Սարգիսջան Եղիազարեանի վրա, որը վերադառնալիս է եղել կլուբից իր մօր հետ միասին։ Աւազակները տարել են 150 ր. և մի թանգագին մատանի։ Կողոպտվողի մայրը, պոկելով իր գլխի քարեղէնը, և պահելով մի ձեռքում, միւսով մի քար է շպրտում աւազակների վրա, իսկ կողոպտվողներին ուղեկցող ակումբի դռնապանապետը ատրճանակ է արձակում կողոպտիչների վրա, որոնք դրանից յետոյ փախչում են։ Ասում են, որ աւազակները հետևելիս են եղել Եղիազարեանին ակումբում, ամբողջ երեկոյ։

Քաղաքումս բոլորը վրդովված են ամենից յարգված բժ. Նարամիշեանի վրա գործած բռնութիւնից։ Բռունցքի հերոսը, մի եկւոր երիտասարդ, առանց որոշ դէմքի և զբաղմունքի, երևի չէ կշռադատել թէ ում վրա է յարձակւում գործում։ Հասարակական զանազան խաւերի ներկայացուցիչներ յայտնել են բժ. Նարամիշեանին իրանց համակրանքը։

Z.

—

Գանձակ, 2 օգոստոսի

Տեղիս Միքայէլեան արհեստաւորաց ուսումնարանի կրօնուսույց Աւետիք ք. Շահնաւարեանը երկարատև հիւանդութիւնից յետոյ կնքեց իր մահկանացուն։ Նախքան հիւանդանալը, նա միաժամանակ վարում էր և տեղիս եկեղեցիների գործակալի պաշտօնը։ Հայր Շահնաւարեանը, որպէս քահանայ յարգանք էր վայելում իր ծխականներից։

Հաւաստի աղբիւրից տեղեկանում ենք, որ օծման կարգը կատարելու և Թաղման հանդէսին ներկայ գտնվելու համար Աբարանից հեռագրով կանչված է Բենիկ վ.-ը։ Իսկ ինչու անտեսված է արվել տեղիս փոխանորդ Լեոն վ.-ը, այդ մութն է մնում։

Բացի այդ, նոյն հաւաստի աղբիւրը յայտնում է, որ նամակով արգելվել է Չալագ ուխտատեղիի կառավարիչ՝ Մկրտիչ ք. Աստուածատուրեանին, տալու իր ընկերական վերջին յարգանքը։ Այսպիսի բռնկեցնում քէն պահել և արգելել մարդկանց ընկերական յարգանքը տալու մի անշունչ դիակի, այդ վեր է մարդկային մտածողութիւնից, ամեն մի բարոյական տեսակէտից։

Գ.

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՉԻ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԵՍՏԱՆՈՒՄ

II*)

Անցած անգամ քննութեան առանք այն առաջարկները, որոնք եղել են մամուլի մէջ Թուրքեստանում թեմական տեսուչ ունենալու խնդրի շուրջը և եկանք այն եզրակացութեան, որ, ընդունելով հանդերձ թեմական տեսչի անհրաժեշտութիւնը, պէտք է ձգտել օր առաջ թեմ. խորհուրդ ունենալ, որի աչալուրջ հսկողութեան տակ թեմ. տեսուչների գործունէութիւնը դրական արդիւնք առաջ կը բերի, և ինքնըստինքեան մի պլիւս կը լինի դպրոցական ցաւոտ կեանքում։

Այո, թեմ. տեսուչների գոյութիւնը անհրաժեշտ է դառնում աւելի քան մեր դժոխ իրականութեան մէջ, ուր շատ անգամ յանցաւորների հետ միասին՝ աշխատում են դատապարտել դպրոցական այն վարիչներին, որոնք, ի պաշտօնէ, ստիպված են և պարտաւոր են ընթացք տալ դպրոցական կեանքում առաջ եկած երևոյթներին, որոնք նուազ կամ առաւել չափով արգելք են հանդիսանում ուսման կանոնաւոր ընթացքին և առաջ բերում մի անմխիթար դրութիւն, որին անուշադրութեան մատնելը աւելի քան դատապարտելի է միւս կողմից։

Ահա դարձեալ հայ դպրոցական պաշտօնեայի համար մի ծանր անելանելի դրութիւն որին դարձեալ զոհ է գնում հայ ուսուցիչը, կանգնած մնալով երկու կրակների մէջ։

«Մշակի» էջերում շատ և շատ անգամ գրվել է այն դժնդակ պայմանների մասին, որոնց մէջ գործում են հայ ուսուցիչները։

Շատ և շատ անգամներ գրվել է այն խնամիական կապերի մասին, որոնց պատճառով զոհվում են հաւասարապէս թէ մանուկ սերունդը և թէ ղեկավար ուսուցչութիւնը։

Նմանապէս Երևան են հանված դէպքեր, երբ ուսուցիչներն իրանք պատճառ են դարձել կրթական գործի կաղալուն, շնորհիւ իրանց անփոյթ և անբարեխիղճ վերաբերմունքի դէպի դպրոցական սրբազան պարտականութիւնները։

Անթիւ են այն շարանները, որ մենք այժմ կարող ենք արձանագրել։

Սակայն մեր նպատակն է միայն շեշտել, որ նման երևոյթներ յաճախակի կրկնվում և ցաւալի հետևանքներ են առաջ բերում միայն այն պատճառով, որ մեր դպրոցներից բացակայում է ընդհանուր աչալուրջ, ղեկավար ոյժը, որը դիսցիպլինայի պիտի ենթարկէ դպրոցական հիմնարկութիւններն ու նրանց ղեկավար մարմիններին, լինի նա ուսուցիչ թէ հոգաբարձու, նրանցից իւրաքանչիւրին ցոյց տալով իր արժանի տեղը։

Այդ տեսակէտից ամենամեծ չափով, պարզ է, որ պիտի տուժէ Թուրքեստանը՝ մասնաւորապէս և Աստրախանի թեմը՝ ընդհանրապէս, ուր միանգամայն բացակայում են թեմ. խորհուրդը և թեմ. տեսուչները, այդ առաւել չափով հսկող ու պատասխանատու ինստանցիաները դպրոցական աշխարհում։

Եւ պարզ է, որ նման հիմնարկութիւնների և գործօնների բացակայութիւնից ամենից շատ պիտի տուժեն ուսուցիչները, էլ աւելի աւագ ուսուցիչները, որոնք ամեն մի րոպէ պատասխանատու են հանդիսանում բոլորի առաջ դպրոցում կատարված ամեն մի դէպքի պատճառով և որոնք շատ անգամ, իրանց պաշտօնավարութեան ընթացքում, ստիպված են ասել ճշմարտութիւններ, որոնք կարող են դուր չը գալ այս կամ այն ուսուցչին, հոգաբարձուին և կամ հասարակութեան մի շարք անդամներին։

Այսպիսի երևոյթներ շատ անգամ են տեղի ունեցել դպրոցական կեանքում. մենք կը բաւականանանք յիշելով միայն մի դէպք, որ տեղի է ունեցել մեզ մօտ Ասխաբադում՝ անցեալ ուսումնական տարվայ հէնց սկզբներում։

Հոգաբարձութիւնը մի շարք միջամտութիւններից ու ցուցումներից յետոյ, պաշտօնավարելու է հրաւիրում իր խնամքին յանձնված դպրոցում ուսուցչուհի տիկին Ն. Աթայեանին, որոշելով տալ վերջինիս ձեռագործի դասերը միայն, դասաբաշխումը վերապահելով մանկավարժական խորհրդին։

Ուսումնական տարվայ հէնց առաջին օրերում գումարում են մի քանի մանկավարժական ժողովներ՝ կատարելու դասաբաշխումը. և սակայն այդ մի շարք ժողովները ձեռնունայն ցրվում են, շնորհիւ այն հանգամանքի, որ ուսուցչուհին բացարձակ կերպով հրաժարվում է ստանձնել այն առարկաները, որոնց համար աւելի յարմար էր գտնում նրան մանկավարժական խորհուրդը։ Բոլոր կոմբինացիաներն ու ջանքերը ապարդիւն են անցնում՝ համոզելու ուսուցչուհուն։

Վերջինս ամեն անգամ կտեգօրիկ կերպով յայտարարում էր, որ ինքը պահանջում է անպայման իրան յանձնել հայոց լեզուի դասերը. հրաժարվելով միաժամանակ ձեռագործի դասերից, որ ինքը յանձն էր առել դասաւանդելու. հակառակ պարագայում՝ սպառնում էր թողնել իր պաշտօնը և հեռանալ... Մանկավարժական խորհուրդը գտնվում էր մի անելանելի ու ծանր կացութեան մէջ։ Նա միանգամայն անարդարացի էր գտնում երկու ճեմարանաւարտների հանդէպ հայոց լեզուի դասերը տալ ուսուցչուհուն, երբ վերջինս աւարտել է գիմնազիայում մինչև 4-րդ դասարան և ապա հայոց լեզուի ցենզի քննութիւն բռնել։ Հայոց լեզուի դասերի թեկնածուների տարբերութիւնը խիստ զգալի էր և մանկավարժական խորհուրդը միաձայն գտնում էր անհնար՝ տալ հայոց լեզուի դասերը ուսուցչուհուն, քանի որ ճեմարանաւարտ ուսուցիչներից մէկն արդէն անցած տարվանից աւանդել էր հայոց լեզուի դասերը, իսկ երկրորդն էլ, միւս կողմից, ինքն էր ցանկանում ստանձնել այդ դասերը։

Տարվայ սկզբում ծագած ոչ-ցանկալի կոնֆլիկտի պատճառով աւագ ուսուցիչը դիմում է հոգաբարձութեան նախագահ հանգուցեալ Թ. քահ. Աստվածեանին, խառն ժողով գումարելու և լուծելու այդ խնդիրը։ Սակայն վերջինս հոգաբարձութեան անդամ Բ. Աթայեանի հետ միջամտում և առաջարկում է մանկավարժական խորհրդին հայոց լեզուի դասերը յանձնել տիկին Ն. Աթայեանին իր պահանջի համաձայն, համոզված՝ որ նա, ուսուցչուհին, իր յայտարարութեան համաձայն, մասնագէտ է այդ առարկային և կարող է տանել այդ դասերը։

Ի՞նչ էր մնում անել մանկավարժական խորհրդին այսպիսի պայմաններում... եթէ ոչ ցաւելով տեսնել, թէ ինչպէս դասաբաշխումը կատարվում է հակաօրինական պայմաններում։

Սկսվում են պարապմունքները. և առաջին իսկ օրերից նկատվում են այն աչք ծակող թերութիւնները և տգիտութիւնը, որ ցոյց էր տալիս ուսուցչուհին հայոց լեզուի դասաւանդման ընթացքում։

Այդ բոլորին վերահասու է լինում ոչ միայն աւագ ուսուցիչը, այլ և նկատում են բոլոր ուսուցիչները. գիտէր և հոգաբարձութեան նախագահը. սակայն դրութիւնը շատ փափուկ էր....

Աւագ ուսուցիչը մի շարք պաշտօնական նկատողութիւններից յետոյ՝ յիշեալ ուսուցչուհուն իր կատարած զգալի թերութիւնների հանդէպ, ստիպված է լինում գումարել մանկավարժական ժողով, քննելու այն մեծամեծ սխալները, որ թոյլ էր տուել յիշեալ ուսուցչուհին։

Ուսուցչուհին քաջ գիտենալով իր խախուտ դրութիւնը և տկար պատրաստականութիւնը առանձնած առարկաների մէջ, երեք անգամ խուսափում է մանկավարժական ժողովից «հիւանդ եմ» կեղծ պատճառաբանութեամբ և սակայն այդ հիւանդ դրութեամբ շրջում է հոգաբարձուների տները և գանգատների շարան թափում աւագ ուսուցչի հասցէին, որ իբր վերջինս թշնամական վերաբերմունք է ցոյց տալիս իր դէմ։

Հոգաբարձութիւնը, վրդովված՝ աւագ ուսուցչի դէմ, գումարում է ժողով և հրաւիրում է աւագ ուսուցչին գալ և բացատրութիւններ տալ ուսուցչուհու բողոքագրի հանդէպ։

Աւագ ուսուցիչը պարզում է ուսուցչուհու հոգաբարձութեան դիմելու շարժառիթը և մէջտեղ բերում այն մի քանի տասնեակ տետրակները, որոնք միանգամայն ապացուցում են ուսուցչուհու բոբիկ լինելը հայերէնի մէջ։

---

*) Տես «Մշակ» № 164.

Պատկերը փոխվում... պարզվում է ամբողջ իրողութիւնը։ Հոգաբարձութիւնը մի շարք ժողովներից յետոյ որոշել է դիմել ուսուցչուհուն, որ նա կամաւոր կերպով թողնի դպրոցը։ Սակայն վերջինը, հակառակ իր նախկին յայտարարութիւններին, չի ուզում լսել հոգաբարձութեան առաջարկը, հրաժարվելով, միաժամանակ, այժմ էլ... հոգաբարձական ժողով գալ բացատրութիւններ տալու, չը նայած ժողովը գումարված էր իր խնդրանօք։

Գումարվում է խառն ժողով, որը քննելով ուսուցչուհու երկամեայ պաշտօնավարութեան ընթացքում առաջ եկած կոպիտ ու աններելի սխալները՝ գտնում է, որ ուսուցչուհին հայերէն չը գիտէ, որ նա բազմաթիւ սխալներ է անում աշակերտների տետրակներում, և որ իւրաքանչիւր աշակերտի տետրակում բաց է թողնում 15—25 սխալ միայն մի երեսի մէջ. ուստի որոշում է միաձայն, ձեռնպահութեամբ հոգաբարձու Բ. Աթայեանի, ազատ համարել տիկ. Ն. Աթայեանին իր պաշտօնից, որոշելով միաժամանակ տալ նրան նաև 2 ամսվայ յաւելեալ ռոճիկ։

Այնուհետև հոգաբարձութիւնը, հոգաբարձութեան անդամ Բ. Աթայեանի ձեռքով, հեռագրում է Թիֆլիս Ուսուցչական Միութեանը նոր ուսուցիչ ուղարկելու Ասխաբադի ծխական դպրոցի համար։ Վերջինից բացասական պատասխան ստանալով, հոգաբարձութիւնը ստիպված է լինում ծանրաբեռնել մնացած ուսուցիչներին և 12 դաս էլ յանձնում է հոգ. նախագահ Թ. քահանայ Ատովմեանին. իսկ աւագ ուսուցիչը, հակառակ հասարակութեան մէջ տարածված բոլոր սուտ լուրերի, և հակառակ հոգաբարձութեան առաջարկութեան, միանգամայն հրաժարվում է վերցնել որև աւելորդ դաս։

Ահա սկսվում են ուսուցչուհու և իւրայինների բանսարկութիւնները աւագ ուսուցչի հասցէին ամենագռեհիկ խծբծանքներով։ Սկսվում են մութ ոյժերի փոթորկումները տներում, պատերի տակ, մանուկ սերնդի շաքերում՝ իր սեփական յարկի տակ, չը խնայելով անթոյլատրելի զրոյցներ թէ հասարակութեան և թէ աշակերտների մէջ՝ ուսուցիչների հասցէին։ Սկսած պրովօկացիան պարարտ հող է գտնում... Միայն աշակերտութիւնը, որի մէջ կորչում էին ցանված որոմները, շարունակում է իր սրտաբաց վերաբերմունքը դէպի ուսուցիչները։ Ամեն տեսակի ջանքեր ապարդիւն են անցնում խլրտումներ գցել գիտութեան տաճարի մէջ։ Պարապմունքները այնուհետև շարունակվում են աւելի խաղաղ ու արդիւնաւէտ։ Ուսուցչուհու մի շարք դիմումներից յետոյ կազմվում է միջնորդ դատարան նրա և աւագ ուսուցչի միջև, չը նայած հոգաբարձութիւնը և ուսուցչական կազմը արգելում էին վերջնիս դատի դուրս գալ ուսուցչու հետ, որին արձակել էր խառն ժողովը։ Դատավարութեան յանձն են առնում մասնակցել հաւասարապէս ինժեները, բժիշկը, փաստաբանը, քահանան, վաճառականը և... հայ կինը։ Եւ յետոյ... այն, որ... «Երկնեց երկիր և երկին և ծնաւ մուկը չնչին» ասում է առածը... Ուսուցչուհին խուսափում է իր աղաղակած միջնորդ դատից և լռելեայն հեռանում քաղաքից։ Հասարակութիւնից, այնուհետև, խումբ խումբ գալիս են դպրոց ծանօթանալու փաստերի հետ և կարճ ժամանակում բացվում է այն սոսկալի պատկերը, որի հեղինակը, դժբաղդաբար, դարձեալ ուսուցչուհին էր....։ Գումարվում է յետագայում ծխական ժողով, ուր ժողովականներից մէկը կասկած է յայտնում հոգաբարձական որոշման դէմ. սակայն աւագ ուսուցչի յայտարարութիւնից և հոգաբարձութեան զեկուցումից յետոյ խօսքը յետ է վերցնում և ծխական ժողովը վերջնականապէս թաղում է այդ խնդիրը և այն բոլոր վրպարտութիւնները, որոնք զանազան անձնաւորութիւնների ձեռքով տարածվել էին հասարակութեան մէջ աւագ ուսուցչի հասցէին։

Ահա մի պատկեր հայ հասարակական ապականված մթնոլորտից, ուր «փայլում է» աւագ ուսուցչի, ալիքների մէջ ընկած, խեղճուկ, տաշեղեայ պաշտօնը, մի կտոր հացը, որ ստիպում է մեզ շատ անգամ լռել և ճշմարտութեան առաջից աչքերը փակած անցնել։

Գ. Հայկունի

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՊԱՏՃԱՌ ԱՆՅԱՅՏՈՒԹԵԱՆ

Ջալալ-Օղլի, 24 յուլիսի

Բնութեան հրաշալիքներով գեղեցկանկարված Լօռու շրջանի մասին, որքան էլ նա մօտ է մեզանից, մեր ունեցած հասկացողութիւնը շատ թիւր է և, եթէ կուզէք, անգամ միակողմանի։ Եթէ նոյնիսկ, մի կողմ թողնելով այդ շրջանի ուրիշ շատ և շատ առաւելութիւնները, վերցնելու լինենք նրան հէնց միմիայն որպէս ամարանոցատեղի, այս դէպքում ևս կը տեսնենք, որ այդ կողմից էլ շատ քիչ է մեր՝ նրա մասին ունեցած ծանօթութիւնը։

«Սանահին, Ղարաքիլիսա, Դիլիջան» և, քիչ յետոյ էլ, «Ջալալ-Օղլի»,—ահա ոչ-լօռեցիների հասկացողութեան մէջ ամփոփված Լօռու ամբողջութիւնը։ Ուշադրութեան արժանի, բայց և տխուր իրողութիւնն այն է, որ մեր ունեցած տեղեկութիւնը վերաբերում է այն կէտերին, ուր կան և լինում են ամարողներ, իսկ ամարողն էլ լինում է այնտեղ, ուր կայ շատ թէ քիչ կանոնաւորված հաղորդակցութիւն, յարմար ճանապարհ։ Սանահին կայարանից սկսած Լօռու որ գիւղն էլ կամենաք վերցրէք, ամեն մէկը նրանցից մի-մի հրաշալի ամարանոցատեղի է իր ծաղկազարդ դաշտ-անտառներով, սառնորակ աղբիւրաջրերով, մաքուր օդով և առողջարար կլիմայով։ Իսկ եթէ նրանց մեծամասնութիւնը մատնված է անյայտութեան և մեր հասկացողութեան մէջ Լօռու ամբողջութիւնը պարփակված է այդ չորս անուան մէջ, այդ էլ արդիւնք է մի կողմից յարմար ճանապարհների բացակայութեան, միւս կողմից էլ ապացոյց այն բանի, որ մենք այլապէս, առանց ամարողների միջնորդութեան, նախ՝ միմեանցով հետաքրքրվելու մտքից հեռու ենք, իւրայիններով հետաքրքրվելու գաղափարը մեռած է մեր մէջ և երկրորդ՝ ընդհանրապէս մեր գիւղերը շատ քիչ, կամ բոլորովին լուրջ նշանակութիւն չեն տալիս կանոնաւոր ճանապարհ, հաղորդակցութիւն ստեղծելու հարցին։ Եւ որովհետև ինձ համար դեռ պարզ չէ, թէ իրանց մէջ ամարողներ ընդունող մեր գիւղերի ստացած օգուտն է շատ, թէ վնասը, այդ պատճառով էլ ցաւալի է ոչ թէ այն, որ ճանապարհ չունեցող գիւղերը զրկվում են ամարողներից, այլ այն, որ, ինչպէս ասացի, մեր գիւղերը չունենալով բարեկարգված ճանապարհներ՝ զրկվում են միմեանց հետ սերտ յարաբերութիւն ունենալու և խոշոր կենտրոնատեղիների հետ կապվելու հնարաւորութիւնից։

Հարկ կայ արդեօք կանգ առնելու գիւղական տնտեսութեան մէջ կանոնաւորված ճանապարհների ունենալիք օգտաւէտ նշանակութեան վրա։

Շահալի-Ջալալ-Օղլու ճանապարհի երկարութեամբ գեղեցիկ շղթայով փռված են մի շարք գիւղեր, որոնցից ոչ մէկը ոչնչով յետ չի մնայ յիշածս ամարանոցներից, բայց նրանք ուշադրութեան չեն արժանանում, որովհետև այդ ճանապարհի խորտ ու բորտութեան պատճառով կանոնաւոր հաղորդակցութիւն չէ ստեղծված երկաթուղու գծի հետ, որպիսի հանգամանքի շնորհիւ էլ երթևեկութիւնը չէ զարգանում։

Սակայն այդ ճանապարհի տարածութեան վրա գտնվող գիւղերը, ի պատիւ նրանց պէտք է ասել, զգալով անբարեկարգ ճանապարհից իրանց տնտեսութեանը հասնող վնասը, հասարակական միացեալ ոյժով ձեռնարկեցին նոյն ուղղութեամբ երկրորդ զուգահեռ ճանապարհ անցկացնելու գործին, որը հասցված է մինչև Կուրթանա յայտնի «դիբը» (Ջալալ-Օղլու կողմից), որտեղ և կանգ են առած աշխատանքները ժամանակաւորապէս. իսկ կանգ առնելու պատճառը, ինչպէս ասում են, այն է, որ գիւղերի մի մասը ցանկանում է Շահալի կայարանից սկիզբ տալ ճանապարհին, իսկ միւսը Բօլագիրանից։ Այսպէս թէ այնպէս, գործը սկսված է և ցանկալի է, որ ոչ միայն այդ «ժամանակաւոր կանգ առնելը» կարճ լինի և արգելառիթը վերացած, այլ և որ մեր գիւղերն ընդհանրապէս լուրջ նշանակութիւն տան կանոնաւոր ճանապարհներ ունենալու խնդրին, որի բացակայութիւնից այնքան խորապէս տուժում է մեր գիւղատնտեսութիւնը թէ բարոյապէս և թէ նիւթապէս։

Եօլլի

ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ՀԱՇԻՒՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Նոր-Բայազէտ, 29 յուլիսի

Յուլիսի 26-ին Խորէն սրբազանի հրաւիրանօք տեղի ունեցաւ մի փոքրիկ խորհրդակցութիւն 6—7 հոգու մասնակցութեամբ՝ մեր ծխ. դպրոցի հոգաբարձական հաշիւների վերաբերմամբ։

Որքան յիշում են ընթերցողները, «Մշակում» ես գրել էի, որ հոգաբարձական հաշիւների մէջ ծռութիւն է տիրում, դպրոցի հոգաբարձուները ուսումնական տարվայ ընթացքում հաշիւ տեսնելով՝ մի նշանաւոր գումար՝—876 ր. 73 կ.—պակասորդ է գտնում դպրոցական գումարներից։ Այդ հարցի առիթով մի քանի անգամ ժողովներ տեղի ունեցան առաջներում, որոնք անհետևանք անցան, քանի որ ոչ վերաստուգիչ յանձնաժողով էին ընտրում և ոչ հաշւետւութեան ստուգութիւնը լուսաբանում։ Մինչդեռ ժողովրդի մէջ հազար ու մի կասկածի տեղիք է տրվում։

Հէնց Խորէն սրբազանի խորհրդակցութիւնը պտտում էր այդ խնդրի շուրջը, քանի որ հոգաբարձական հաշւետւութեան և վատնումների վերաբերեալ այդ գործը այնքան ձգձգվել և ընդհանրացել էր, որ անցել էր նոյնիսկ դատարան։ Այդ պատճառով Խորէն եպիսկոպոսը ցանկութիւն ունի այդ խառնաշփոթ հաշիւը մի կերպ վերջացնել, որպէսզի պղտորված մտքերը խաղաղվեն, մանաւանդ որ այդ հաշւետւութեան մաքրութեան և ծռութեան հետ է կապված ծխ. դպրոցի վիճակը, մի հիմնարկութիւն, որը բարձր է անշուշտ ամեն բանից—և փողից, և սեփական «եսից», և անձնական քմահաճոյքից։

Պէտք է յիշել սակայն, որ մեր հոգաբարձական հաշիւները մինչև այժմ (մօտ 6 ամիս) չեն մաքրվում այն պատճառով, որ հոգաբարձութեան գործերի միջից գլխաւոր մատեանը կորել-անհետացել է։ Եթէ լսենք հոգաբարձութեան գանձապահ Հ. Տէր-Միքայէլեանցին, մատեանը պահված է ընկեր-հոգաբարձուների կողմից այն նպատակով, որպէսզի իրան մեղադրեն զեղծումների մէջ, իսկ եթէ լսենք միւս կողմին (սրանք գործակալ Ս. ք. Ազարեանցի հետ կազմում են 5 հոգի), մատեանը պահված է Հ. Տէր-Միքայէլեանցի կողմից՝ իրան արդարացնելու մտքով՝ դպրոցի գումարների վատնումների մէջ։

Այսպէս թէ այնպէս՝ դպրոցական տումարը, որ գլխաւոր գիրքն է հաշւետւութեան վերաբերմամբ, մէջտեղից վերացվել է, և այդ պատճառով պարզապէս հաշիւ տեսնել անկարելի է։ Ուստի մնում է մի կերպ մօտենալ գումարների—մուտքի ու ելքի—ստուգութեանը և մի բան աւել-պակասով վերջ տալ այդ հաշւին, վերացնելով նաև ժողովրդի մէջ տարածված առէ-կօսէները և թիւրիմացութիւնները, խնայելով մանաւանդ դպրոցի վեհ անունը և վերականգնելով ժողովրդի հաւատը դէպի ազգային կրթական այդ հիմնարկութիւնը։

Սակայն Խորէն սրբազանի մօտ եղած խորհրդակցութեան միջոցին հոգաբարձու գանձապահ Հ. Տ.-Միքայէլեանցի բացատրութիւնը իր գործունէութեան վերաբերմամբ, թէ ոչ մի կոպէկի զեղծում չէ եղել իր ձեռքով՝ բաւարար հետևանք չունեցաւ Խորէն սրբազանի մօտ։

Թէ ինչով կը վերջանայ այդ բանը, որ մի մեծ սկանդալ է դառել մեզանում (քանի որ մարդիկ են մեղադրվում դատարանով և այլն) կը գրեմ հետևանքի մասին։

Որսորդ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

Անցած տարի, երբ Պօլիս էի, «Ժամանակ» օրաթերթի մէջ ընդարձակօրէն գրեցի այս խնդրի վրա։ Յետոյ Կովկասից անցնելիս լսեցի, թէ իմ գրածները մասամբ արտատպվել են «Մշակի» մէջ և «Սուրհանդակ» ու ուրիշ թերթեր էլ քննադատականներ են գրած։

Մեր ազգային դժբաղդութիւնից մէկն այս է, որ մեր հատուածները իրարից բաժանված են չինծու չինական պատերով, և թիւրքահայերի թերթերը Ռուսաստան չեն մտնում կամ այնպէս անկարգ են մտնում, որ ընթերցողները զզվում են կարդալուց և բաժանորդ գրվելուց քաշվում են։ Թիւրքահայերն էլ իրանց համար հայ լեզուի յատուկ մենաշնորհ են ստեղծել, երբայական Գօշէն գաւառն են կարգադրել, որ միւս հայերէն լեզուից չը պղծվեն, իրանց բիւզանդական մաքրութիւնը պահեն։ Մեր Արարատեան մայր երկրի լեզուից խորշում են և ասում են, թէ Ահարոնեանի լեզուն լաւ հայերէն չէ։ Կաթսան թէյամանին ասաց՝ «որքան սև է քո հակերեսը»։ Այսպէս որ կովկասեցիք և թիւրքահայերը քանի օրով միայն իրարից բաժանված լինելով հանդերձ՝ յստակ գաղափար չունեն մէկը միւսից։

Բաթումեցիք Սև ծովի վրա են և Պօլսից 48 ժամ հեռու, բայց Պօլսի լրագրութիւնից տեղեկութիւն չունեն։

Թիֆլիսի մէջ յայտնի հրապարակագիրներն իսկ ասացին, թէ Պօլսի օրաթերթերն այնպէս ուշ ու անկանոն են իրանց հասնում, որ կարդալու արժէք չէ մնում։ Ուրեմն ինձ պարտաւոր եմ զգում կրկնել ռուսահայերի համար այն գաղափարները, որ արդէն արծարծել եմ թիւրքահայ թերթերի մէջ։

Էջմիածնի հայրապետի ընտրութիւնը ընդմիշտ թիւրքահայերի մեծամասնութեան ձեռքումն է, թէև նախ և առաջ նա Էջմիածնի միաբանութեան մի վանահայր է և երկրորդ ռուսահայերի և պարսկահայերի կրօնական, կրթական, ազգային տնտեսական և ընդհանուր քաղաքական ամեն խնդրի մէջ կաթողիկոսի ազդեցութիւնը կարող է մեծ օգուտ կամ մեծ վնաս առաջ բերել։ Իսկ թիւրքահայերի գործերի մէջ նա չէ կարող ուղղակի միջամտել. աւելի իմաստուն պիտի լինի երբեք չը խառնվել նոյնիսկ հեռուից, այլ պահել միայն իր բարոյական ազդեցութիւնը, այսպիսով պահպանելու և ազգային միութիւնը։

Թիւրքահայերի ներքին ազգային խնդիրները պէտք է լուծվեն Պօլսի պատրիարքարանի միջոցով և ազգ. սահմանադրական ժողովի կանոնների համեմատ։ Ուրեմն հայրապետի ընտրութիւնը այն հայերի ձեռքումն է, որոնք նրանից անկախ են, և լաւ է, որ միշտ անկախ մնան. և ընդհակառակը՝ ռուսահայերն ու պարսկահայերը, որոնց բոլոր խոշոր շահերը կախված են կաթողիկոսից փոքրամասնութիւն են կազմում նրա ընտրութեան մէջ, և սրանք պէտք է իրանց ձեռքերը քաշած սպասեն և նայեն, թէ թիւրքահայ մեծամասնութիւնը ինչպիսի տէր ու տիրական պիտի ընտրէ իրանց համար։ Առայժմ պէտք չենք տեսնում մտնել այս անկանոն կացութեան բացատրութեան մէջ, բայց իրողութիւնն այն է, որ ռուսահայերը թէև թւով թիւրքահայերից շատ պակաս չեն, տնտեսապէս աւելի ճոխ են և ընդհանուր զարգացմամբ գերադանցօրէն վեր են—այնչափ վեր, որ երկու հատուածների մէջ բաղդատութեան եզրեր գտնելն անգամ ծիծաղելի կը դառնար—այս բոլոր առաւելութեամբ հանդերձ, կաթողիկոսի ընտրութիւնը թիւրքահայերից կախում ունի։ Եւրոպայի գաղութը ձայն չունի, բալկանեան և Ամերիկայի մեծ և կարևոր հայութիւնը նմանապէս անձայն է, և պարսկա-հնդկահայերը միայն 2 քուէ ունեն, իսկ Կովկասը և բոլոր Ռուսաստանը մինչև Խաղաղ ովկիանոսի ափերը 6 ձայն ունեն։

Թիւրքահայերն իրանց ջախջախիչ մեծամասնութիւնից օգտվել են, գուցէ չարաչար են օգտվել, փոխանակ մտաբերելու, թէ շինծու անարդարացի մեծամասնութիւնը պէտք է վեհանձնօրէն վարվի. և Ներսէս Աշտարակեցու օրից այս կողմ՝ Մատթէոս, Գէորգ, Խրիմեան և Իզմիրլեան կաթողիկոսները բոլորն էլ թիւրքահայեր են եղած։ Սակայն մեր տպաւորութիւնն այն է, որ այս անգամ ընդհանուր փափագ կայ թիւրքահայերի մէջ՝ իրանց քուէն կենտրոնացնել այն ռուսահայ կղերականի վրա, որի շուրջը համաձայնվեն ռուսահայերն ու պարսկահայերը։ Մենք վերջին ընտրութեան պատգամաւորներից շատերի հետ կարծիքի փոխանակութիւն ենք ունեցել. Պօլսի և շրջակայ գաւառի հայերին ևս այցելել ենք, և մեր տպաւորութիւնն այն է, որ նրանք փափագում են այս անգամ իրանց քուէն կենտրոնացնել մի ռուսահայ արժանաւոր կղերականի վրա։ Ուրեմն շահագրգիռ է աչքից անցնել թիւրքահայ և ռուսահայ գլխաւոր թեկնածուները և տեսնել թէ նրանց մէջ արժանաւորները ովքեր են։

Թիւրքահայերի մէջ կան տեղապահ Մանկունի սրբազանը և Դուրեան ու Օրմանեան եպիսկոպոսները. առաջինը խիստ ծեր է և քաջառողջ ծերերից էլ չէ. յարատև աշխատանք անկարելի է սպասել նրանից. վեհարանն էլ երկար տարիներ անկելանոցի դեր է կատարել, ու ժամանակը հասել է, որ առողջ, գործելու կարող մէկը մնացած դիզված աշխատանքները մաքրազարդէ։

Մանկունին երկար տարիներ պաշտօնական գործերից հեռու է մնացել, իսկ թէ նա ինչ անուն և գործունէութիւն է ունեցել Էջմիածնում Գէորգ կաթողիկոսի օրօք, յիշելու հարկ չը կայ. Րաֆֆիի «Խենթը» հազար նմոյշներից մէկն է իրան ժամանակակից իրագէկ հեղինակների կարծիքներից. կարծէ «Խենթի» վերջին մասերը կրկին կարդալ՝ մէկ յստակ գաղափար կազմելու Էջմիածնի անցած-դարձածներից։

Դուրեանի թեկնածութիւնը այսօր չէ կարող աջողվել. թիւրքահայերը չեն յանգցնի նրա պատրիարքութեան պատմութիւնը և իրանց տխուր դերը մտաբերելով առաջարկել, թէ «մենք Դուրեանը պատրիարքութեան գահից վայր գլորեցինք, այն էլ ինչ խայտառակութեամբ, այժմ դուք եկէք նրան որպէս հայրապետ ընդունեցէք»։ Դուրեան սրբազանը անբասիր, բարի եկեղեցական է, լաւ գրագէտ, բայց Էջմիածնի միաբանութեան և Ռուսաստանի պայմաններին անծանօթ. դժուար թէ կարող լինի երկար ժամանակ դիմադրել իր դէմ ցցված դժուարութեանց. աւելի լաւ ծառայութիւն կարող է մատուցանել Թիւրքիայում գործելով։

Օրմանեան սրբազանը շատ համակիրներ ունի մանաւանդ Ռուսաստանի մէջ, ուր նրան իր գրական համբաւից և անունով ծանօթ են. գործերն և բուն մարդուն չեն ճանաչում. բայց ընդհանուր լաւ տպաւորութիւն կայ, որ նրա թեկնածութիւնը երբէք չէ կարող աջողվել։ Նրա դէմ անյաղթելի դժուարութիւններ կան։ Ամբաստանութեան տակ է տակաւին. շատերը իրանց բազմամեայ չարչարանքները, աքսորումն և բանտարկութիւնը նրան են վերագրում, և անկարելի է, որ այսպիսիները երբէք հաշտվեն նրա կաթողիկոս լինելու հետ։

Թեհրան Պրոֆ. դոկտ. Բաղլի

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ի նկատի առնելով, որ Թիֆլիսի քաղաքային ընտրողների ցուցակները ստուգող դումայական մասնաժողովը օգոստոսի 2-ին աւարտեց իր աշխատանքները, որից յետոյ եօթն քաղաքամասերի ընտրողների ցուցակները ցուցադրվեցին, քաղաքային վարչութեան հաշւապահութիւնը այժմ զբաղված է հաշիւ անելով ապառիկների քանակը, որ մնացել է զանազան տնատէրերի և կալուածատէրերի վրայ, որպիսի աշխատանքը կաւարտվի երկու օրից յետոյ։

◆ Սրանից առաջ Թիֆլիսի քաղաքային դուման 12,300 րուբլի յատկացրեց քաղաքի արուարձանները ջուր դուրս տանելու համար։ Համաձայն այդ դրամայատկացումին՝ քաղաքային վարչութիւնը առաջարկեց ինժ. Բուրղինինին ջուր դուրս տանելու աշխատանքներ սկսել Հալաբարի որոշ մասերում (Խօջիվանքի գերեզմանատան մօտերը), Սոնինսկի փողոցում և Նախալօվկայում։

◆ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատարը հաստատել է Ա. Մանթաշեան առևտրական ուսումնարանի հոգաբարձութեան նախագահ Ա. Միլեանին, իսկ հոգաբարձական խորհրդի անդամների պաշտօնի մէջ Ա. Ենֆիաճեանին, Ի. Գալդամակինին և Բ. Յարութիւնեանին։

◆ Ինչպէս յայտնի է, բագուեցիները ձեռնարկել էին Էջմիածնի հողերը ոռոգելու համար «Սև ջուր» կոչված ջրերը էլեկտրական ոյժով բերել և գործադրել այդ նպատակին։ Այդ ձեռնարկութիւնը իրագործելու համար առ նուազն 100—150,000 ր. պէտք էր ծախսել։ Դրա համար կային մի քանի պրօեկտներ, որոնց մէջ և ինժեներ Կիրակոսեանի ծրագիրը։ Այժմ, ինչպէս մեզ հաղորդում են Էջմիածնից, ծագել է մի ուրիշ աւելի նպատակայարմար և աւելի հեշտ իրագործելի պրօեկտ. Ջուր բերել Սևանի լճից, Զանգու կամ Հրազդան գետի միջոցով, գետ, որ իր սկիզբն առնում է այդ լճից։ Այդ ձեռնարկութիւնը աւելի քիչ ծախս կը պահանջէ, մօտաւորապէս 70,000 րուբլի։ Նրա մի առաւելութիւնն և այն է, որ Սևանի լճի ջուրը, ըստ որակութեան, հիանալի է և առատօրէն կարելի է օգտվել։

◆ Էջմիածնի սինօդը նշանակել է մի անձն ընդհանուր կառավարիչ և վերահսկող հայոց բոլոր վանքերին պատկանող կալուածների վրա։ Այդ անձը ոմն Տէր-Աւետիքեանն է։

◆ Օգոստոսի 6-ին Ռուսական Ջուլֆայում կը բացվի Պարսկաստանի զեղջատու բանկի գործակալութեան գրասենեակը։ Օրհնութեան հանդէսին, իբրև ներկայացուցիչ, Թիֆլիսից կերթայ պետական բանկի Թիֆլիսի ճիւղի կառավարիչ Դ. Բեզօբրազովը։

◆ Եօթն ամսվայ ընթացքում Թիֆլիսի ջրմուղը առել է 118,832 ր. 55 կ. եկամուտ։ Անցեալ տարիների հետ համեմատած ներկայ եօթն ամսվայ ընթացքում 10,317 ր. 23 կ. աւելի եկամուտ է ստացվել։

◆ Ռուս-ճապօնական պատերազմի ժամանակ ողբերգական վախճանով մեռած ադմիրալ Մակարովի յիշատակին Կրօնշտադտում կը կանգնեցվի արձան, որի աշխատանքները արդէն վախճանի մօտ են։

◆ Թիֆլիսի ժողովրդական համալսարանի օգտին, յուլիսի 29-ին, Սուրամում կազմված զբօսանքը զուտ արդիւնք է տուել մօտ 200 րուբլի։

◆ Օգոստոսի 10-ին նշանակված է վրաց ակումբի անդամների ժողով, ուր կը քննըվեն հետևեալ հարցերը. 1) Ակումբի նիւթական դրութիւնը, 2) Կանոնադրութեան որոշ յօդուածների փոփոխումը, 3) Նոր աւագների ընտրութիւնը և 4) Ակումբի համար ձմեռային շինութիւն վարձելու հարցը։

◆ Գօրու գաւառի Երէզվի գիւղի եղջերաւոր խոշոր անասունների մէջ երևան է եկած ժանտախտ հիւանդութիւնը։

◆ Քութայիսում Ի. Դաթէշիձէ անունով մի պարոն ձեռք է բերել Շօթա Ռուսթավելիի «Վէփխիս տղաօսանի» (Ընձենաւորը) պօէմայի հին գրչագիր օրինակը, որը նա կը նուիրէ Վրաց մուզէումին։

ՄԱՄՈՒԼ

Կ. Պօլսի «Բիւզանդիոն» թերթի մէջ կարդում ենք.

Ազգ. երեսփոխան Յ. Ճանկիւլեան էֆ. տեղապահ Ս.-ին ուղղած մէկ գրովը կըսէ, թէ Վանի մէջ վերջերս ընտրուած թէ գաւառական ժողովն և թէ քաղաք. ժողովն ապօրինի են, քանի որ գաւառ. ժողովի ատենապետն է «Իշխան», որ իբրև բնիկ կովկասցի և ռուսահպատակ չէր կրնար մասնակցիլ ոևէ ժողովի։ Իսկ եթէ հպատակութիւնը փոխած է՝ դարձեալ չէր կրնար պաշտօնավարել, քանի որ իր կողմէ Աղթամարի խնդրին մէջ իբրև վանքին արծաթ և ոսկի անօթներն իւրացնող ամբաստանուած է և այս խնդիրը չէ քննուած։ Նամակագիրը կը խնդրէ, որ վերոյիշեալ կէտերը նկատի առնուին և ապօրինի նկատուին յիշեալ ժողովները։

Մեզ ևս շատ զարմանալի էր թւում, որ վանքեր կողոպտելու և սրբապղծութեան մէջ մեղադրվող կովկասցի «Իշխանը», ինչպէս և ամենայն հայոց կաթողիկոսի կողմից իր անբարոյական կեանքի համար կարգալոյծ եղած նախկին Տաճատ վարդապետը կարողացել են ընտրվել Վանի հայոց ազգ. վարչութեան անդամներ։ Միթէ Վանի մէջ չը կան աւելի օրինաւոր մարդիկ։

*

«Մշակի» № 146-ում Օրվայ նորութիւնների բաժնում, մենք հաղորդել էինք Տրիէստում վախճանված Գր. Եղիաեանի արած կտակի մասին։ Ի լրումն մեր հաղորդածի՝ այժմ քաղում ենք հետևեալը Մարսելի «Արմենիա» թերթից.

Եգիպտոսի մեծահարուստ հայերէն Գրիգոր Եղիաեան (Grégoire d'Elie կամ այլ անունով կանչուէր Գրիգոր, որովհետև ժամանակ մը դիւանապետի պաշտօն վարած է Կահիրէի ռուսական հիւպատոսարանին մէջ), որ իր առողջութիւնը դարմանելու համար Եւրոպա եկած էր այս միջոցին, Տրիեստէի մէջ մեռեր է։ Իր մարմինը փոխադրուած է Կահիրէ, ուր մեծ հանդէսով կատարուած կը լինի այժմ իր թաղումը։

Գրիգոր Եղիաեան, որ ամուրի էր, թողած է կտակ մը և կտակակատար նշանակած է Նուպար Պօղոս փաշան, որ ռուսական հիւպատոսարանին յայտներ է, թէ կընդունի այդ պաշտօնը։ Հանգուցեալը ռուսահպատակ եղած էր։ Իր թողած հարստութիւնը 180,000 ոսկիի չափ կը լինի որ կտակած է հետևեալ կերպով.

100,000 ոսկի արժող և տարեկան 6,000 ոսկի հասոյթ տուող կալուած մը իր երեք [illegible] մօրաքեռորդիներին։

18,000 ոսկի արժող և տարեկան 1,200 ոսկի հասոյթ բերող կալուած մը Կահիրէի ազգ. առաջնորդարանին, որ ազգ. վարչութիւնն առոր հասոյթէ հարիւրին 70-ը յատկացնէ Կահիրէի Ազգ. Գալուստեան վարժարանի շրջանաւարտ աշակերտներին բարձրագոյն ուսում ստանալուն օգնելու. հարիւրին 10-ը ազգ. առաջնորդարանի ծախքերին և մնացած 20-ը զանազան նպատակների (իր յիշատակին համար պատարագ, իր սպասաւորներին կենսաթոշակ և այլն):

Ազգին կտակած է նաև իր մի քանի ուրիշ շէնքեր, հնչուն դրամը և այլն, որոնց ամբողջովին արժէքը կը հասնի գրեթէ 60,000 ոսկիի: Այդ շէնքեր և կարասիներ մինչև տարի մը ծախուելով պէտք է ամենքը մէկէն հնչուն դրամի վերածուին և տոկոսից արդիւնքով Իսմայիլիէի մէջ եկեղեցի մը շինուի իր անունով. նաև այդ գոյացած դրամէն պիտի վճարուի 500 ոսկի Կահիրէի հայ աղքատներին, 500 ոսկի Կահիրէի ռուսական աղքատախնամին, 2,000 ոսկի իր որդեգիր աղջկան, 300 ոսկի իր գործակատարին, մէկ տարեվճար իր սպասաւորներին և այլն:

Զարմանալի է թէ այս մեծահարուստ հայը, որ Եգիպտոսի Հայոց Բարեգործական Ընկ. Միութեան կեդրոնական վարչ. ժողովին ալ անդամ էր, մէկ սանտիմ անգամ չէ կտակեր այդ ընկերութեան:

Այս առիթով «Լուսաբեր-Արև» թերթը նկատում է, որ հանգուցեալի այս կտակը գրված է նախ քան Եգիպտոսի Հ. Բարեգ. Ընդ. Միութեան հաստատութիւնը: Հանգուցեալը մտադիր է եղել կտակել մեծ գումար Միութեան, և նոյնիսկ մի երկրորդ այնպէս կտակ է թողել այդ մասին, բայց այդ վերջին կտակը ռուսաց հիւպատոսարանը չէ ճանաչում, իբրև ոչ վաւերացված:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մերվ, 28 յուլիսի

«Մերվի ծխ. դպրոցի շուրջը» վերնագրով Sero-ի թղթակցութեան մէջ («Մշակ» № 156) երկու խնդիր բացատրութեան կարօտ են:

Խնդիրներից առաջինն է աշակերտական թոշակը:

Թոշակ գոյութիւն չունէր Մերվի ծխ. դպրոցում մինչև վերջին ուսումն. տարին, իսկ դպրոցը կառավարվում էր պրօգրեսիվ տուրքով միայն: «Պրօգրեսիվ» խօսքն ինքը ցոյց է տալիս, թէ դպրոցական ծախքերին պիտի մասնակցէ, ուրեմն, հասարակութեան իւրաքանչիւր անդամ, միայն, ի հարկէ, ըստ չափու կարողութեան:

Սկզբունքը գոյութիւն ունէր, բայց, դժբաղդաբար, նա չէր գործադրվում և ահա թէ ինչպէս.

Դպրոցում 1909—10 ուսումն. տարում ուսանում էր շուրջ 120 երկսեռ աշակերտութիւն:

Sero-ն սխալվում է, երբ ասում է, թէ ծխ. դպրոցի աշակերտութիւնը աղքատ դասակարգից է: Այդ 120 հոգու մէջ ամեն դասակարգից էլ երեխաներ կային՝ թէ հարուստ, թէ միջակ և թէ չքաւոր դասակարգից: Այդ այդպէս լինելուց յետոյ յիշեալ 120 աշակերտութեան ծնողներից հոգաբարձական գանձարկղ մտնում էր առ առաւելն 300 ր., իբրև տուրք և ոչ թոշակ, իսկ մնացած 3,000-ից աւելի ծախքը հոգում էին ոչ-ծնողները (այդ գումարի մէջ ի նկատի պիտի ունենալ նաև ներկայացումներից գոյացած մի քանի հարիւր րուբլիները): Այսպիսով, տեղի էր ունենում մի մեծ անարդարութիւն, այն է՝ ով երեխայ չունէր դպրոցում, նա տուրք էր տալիս շատ անգամ հարիւրներով, իսկ ով ունէր, նա չէր վճարում, թէև կարող էր տալ: Չէր տալիս, բաւական չէր, դեռ նրանց երեսիցն էլ էր կենում, երբ նրանից տուրք էին պահանջում: Շատ է ասվել ու խօսվել և նոյնիսկ ծխ. ժողովներում որոշումներ կազմվել, թէ ի՛նչ միջոցների պէտք է դիմել այս չարիքի առաջն առնելու. բայց ոչ մի միջոց չի օգնել. բարեխիղճները տուրքը վճարել են անթերի կերպով, անբարեխիղճ խստապայմանողները դարձեալ իրանց տեղը մնացել իրանց փողերով:

Եթէ Sero-ն և նրա նման սկզբունքներից ճառողները կարծում են, թէ պրօգրեսիվ տուրքի կողմնակիցները միայն իրանք են, չարաչար սխալվում են: Թող նրանք հէնց մի անգամ գնան տուրք հաւաքեն և լսեն, թէ ի՛նչ կը պատասխանէ նրանց տուրք վճարող, բայց դպրոցում որդի չունեցող այն քաղաքացին, որի իր չափ ունեւոր դրացին դպրոցում երեխայ ունի և դպրոցական տուրքը չի տալիս շարունակ, և ապա միայն փորձից յետոյ բան խօսեն այդ առիթով: Իսկ թոշակ նշանակվել է ահա այս սկզբունքով. ով աղքատ է, նա իսպառ ազատվում է թոշակ վճարելու պարտաւորութիւնից. և անցեալ տարի ոչ ոք չքաւորներից թոշակի համար չի արձակվել, իսկ միւսներն անխտիր ամենքը պիտի վճարեն 15 ր. և եթէ երևայ, թէ մէկ ծնող բացի թոշակից կարող է էլի փող վճարել դպրոցին, նրանից աւելին էլ կը պահանջվի. այնպէս որ թոշակ սահմանելով, հոգաբարձութիւնը երբէք միտք չէ ունեցել միայն թոշակով դպրոց կառավարելու. ծխական տուրքն էլի ըստ առաջնոյն գոյութիւն ունի: Անցեալ տարի թոշակ ստարվել է միմիայն շուրջ 1000 ր., իսկ դպրոցի բիւջէն 3500 ր. էր: Պարզ է, որ ոչ ծնողները աւագին փող են տուել դպրոցին: Ինչ վերաբերում է այն խօսքին, թէ անցեալ տարի աշակերտներ են արձակվել դպրոցից, դրանք, անշուշտ, նոյն ծնողների որդիներն են, որոնք փողը Աստուած են շինել և նրանից դուրս ուրիշ բարիք չեն ճանաչում աշխարհում: Թոշակ, ուրեմն, նշանակվել է հէնց նրա համար, որ ունեւոր ձրիակերներին ստիպեն վճարելու իրանց բաժին դպրոցական տուրքը և թոշակի միջոցով կարելի է եղել նրանցից դպրոցում որդի ունեցողներին լծի տակ քաշել, և հոգաբարձական գանձարկղ է մտել այդպիսով 700 ր. աւելի փող, որ մինչ այդ կորչում էր միանգամայն տարապարտուց:

Երկրորդ խնդիրը վերաբերում է քահանայ աւագ-ուսուցիչներին:

Այս խնդիրը վերաբերում է յատկապէս ինձ, երբ Sero-ի մատնանշած երկրորդ քահանայ: Աւագութիւն մեր ծխականում ես արել եմ մի տարի միայն նախանցեալ ուսումնական տարում. այս առաջիկայ տարվայ համար կրկին հրաւիրվել եմ նոյն պաշտօնով: Անցեալ ուսումնական տարվայ աւագութիւնը վարում էր իմ պաշտօնակից քահանան: Անցեալների և քահանաներիս պաշտօնավարած միջոցի դպրոցական կեանքը մեր ժողովրդի աչքի առաջ է, թող նրանք դատեն: Յատկապէս դասեր բաց թողնելու մասին է շեշտել Sero-ն, բայց նա չէ հետաքրքրվել, թէ քահանայ աւագները քանի դաս են բաց թողել. եթէ նա հետամուտ լինէր, կը գտնէր անշուշտ, որ քահանայ աւագները համարեա դասեր բաց չեն թողել, այլ ընդհակառակը բաւական թւով աւելի դասեր են պարապել, այնպիսի դասեր, որ բաց են թողել զանազան յարգելի պատճառներով ոչ քահանայ ուսուցիչները: Sero-ն լսել է, որ քահանաներն ընդհանրապէս դասեր են բաց թողնում, և դրանից ենթադրել է, թէ մեր դպրոցի քահանաներն էլ բաց թողած կը լինեն: Դասեր բաց չեն թողել քահանայ աւագները մանաւանդ այն պատճառով, որ նրանք շատ քիչ դասեր են վերցնում. օրինակ, առաջիկայ տարում ես կունենամ շաբաթական միմիայն 8 դաս:

Միւս կողմից քահանաներս, ի հաշիւ մեր ռոճիկների, նախանցեալ տարիներից դպրոցի բիւջէն ցածրացրել ենք անցեալ երկու տարիներում 200-ական րուբլով, առաջիկայ տարում դեռ էլի աւելի:

Կարծում եմ, որ պակաս նշանակութիւն չը պիտի ունենայ աւագութեան համար նաև քահանաներիս ստացած ճեմարանական լիակատար կրթութիւնը: Երևի հեռու տեղից պիտի գայինք, որ այդ բան թէ գընահատվէր և թէ լաւ աչքի ընկնէր:

Մերվի ծխ. դպրոցի աւ.-ուսուցիչ՝
Արշակ ք. Տէր-Ոսկանեանց

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Երուսաղէմից հաղորդում են «Էջմիածնի հին մանրանկարների ուսումնասիրութեան համար Երուսաղէմ գտնուող տէր Գարեգին վարդ. կը գրէ պատրիարքարան, թէ յունիս 28-ին հասած է վանք և հիւրասիրուած տեղապահին կողմէ: Վանքին թանգարանին մէջ գտնուած է Կարսի վերջին թագաւոր Գագիկ Բագրատունիի, թագուհիին և աղջկան պատկերը նկարուած մագաղաթը, որ թանկագին և պատմական նշխար մըն է: Պատկերին ծայրերը մկրատով թէև կտրուած, սակայն իր բովանդակութեանը մէջ անիկա բան մը չի կորսնցներ: Նկարիչ տէր Պ. Եղիշէ սկսած է նկարել զայն. Գարեգին վարդ. կըսէ, թէ այս մագաղաթը Բագրատունիներէ մնացած միակ ձեռագիրն է»:

✦ Թէհրան եկած բախտիարները թողնում են վայրենի պատերազմիկների տպաւորութիւն. Նրանք հետաքրքրութեամբ շրջապատում են փողոցներով անցնող եւրօպացի կանանց և դիտում, որոնց երբէք չեն տեսել:

✦ Երէկ հաղորդել էինք, որ Ֆաբուզ-Կուխի մօտ պարսիկ կառավարութեան զօրքերը ջարդ են տուել Մահմէդ-Ալիի կուսակից աւազակապետ Րաշիդ-Սալթանէի աւազակախմբին, գերի վարելով աւազակապետին Թէհրան, ուր նա կը գլխատվի: Նախկին շահի հաւատարիմները այդ կռւում տուել են 60 մարդ սպանված և բազմաթիւ վիրաւորներ:

✦ Թէհրանում տենդային պատրաստութիւններ են տեսնվում դիմադրելու նախկին շահին: Մայրաքաղաքի փողոցները լի են զինվածներով: Քաղաքի շրջակայքում տեղի են ունենում կամաւորների զինավարժութիւններ, որոնք պատրաստվում են նախկին շահի դէմ կռւելու համար:

✦ Թէհրանում այժմ դատվում է Մօտաղդ-ուլ-Միւլքը, որը Դամանը Մահմէդ-Ալիի զօրքերի ձեռքը տալու համար յանձնվել է զինուորա-դաշտային դատարանին:

✦ Թէհրանում լուրեր են ստացվել, որ իբր Մահմէդ-Ալին առաջ է խաղացել դէպի Ֆիրուզկէ:

✦ «Р. У.» թերթը հաղորդում է, որ նախկին շահը յայտարարութիւն է ստացել, որով նրան ծանուցանում են, որ նրա Ռուսաստան վերադարձը այլևս թոյլատրելի չէ:

✦ Րաշտի նոր նահանգապետ Սարդար-Մօտամիդը, հակառակ տեղական անջումանի կամքի, արձակված է պաշտօնից:

✦ Րաշտի անջումանը Թէհրանից իր պահանջների նկատմամբ բաւարարութիւն չը ստանալով և գլխաւորապէս ի նկատի առնելով, որ տեղական կամաւորների պահպանման համար դրամ չէ ստացվում, ստիպված է կարգում Թէհրանի մէջլիսին՝ գրաւել Գիլանի կառավարական հաստատութիւնները, այսինքն պօստը, հեռագրատունը և այլն, հաւաքելով բոլոր եկամուտները տեղական ծախքերի հոգացման համար:

✦ Րաշտի վրայով դէպի Թէհրան են անցել ֆրանսիացի այն երեք խորհրդականները, որոնք պարսից կառավարութեան կողմից հրաւիրված են պաշտօններ ստանձնել այլևայլ մինիստրութիւններում:

✦ Չը նայած, որ մէջլիսը որոշել էր պարտված Րաշիդ-ուս-Սալթանէին յանձնել ժողովրդական դատաստանին, սակայն վերջին տեղեկութիւնները ասում են, որ Րաշիդ-ուս-Սալթանէն կռւի ժամանակ ստացած վէրքերից արդէն վախճանվել է:

✦ Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան թեկնածու է համարվում Պետերբուրգի կողմից՝ Պետական Դումայում՝ գեներալ Սուբբոտիչը:

✦ Ա. Գուչկովը հերքում է մամուլի հաղորդած այն լուրը, որպէս թէ նա պիտի քուէարկվի Պետական Խորհրդի անդամութեան համար:

✦ «Н. В.» ասում է, որ դատախազ Սկոպինսկիի սպանութիւնը կատարված է սօցիալիստ-յեղափոխականների այն խմբի ձեռքով, որի մասնակիցները փախել էին տաժանակիր աշխատանքներից: Խարկովի իշխանութեանը աջողվել է գտնել ահաբեկիչների հետքը:

✦ Պետերբուրգի ուսանողների և բանւորների շրջաններում տեղի են ունեցել ձերբակալութիւններ:

✦ Լուրերին նայած, Կ. Պոլսի ռուսաց դեսպան Զարըկովը նշանակվում է արտաքին գործերի մինիստր:

✦ «Միութիւն և Առաջադիմութիւն» կոմիտէն վճռել է առաջ բերել կաբինէտի անկում:

✦ Մակեդոնական յեղափոխականների կենտրոնական կոմիտէն որոշեց ուժեղ գործունէութիւն սկսել Մակեդոնիայում: Կռւողների նորանոր ոյժեր գրաւելու համար, զանազան տեղեր մարդիկ են ուղարկված:

✦ Կ. Պոլսից հաղորդում են, որ Պարսկաստանում ապրող թիւրք հոգևորականները ագիտացիա են մղում ընդդէմ նախկին շահի:

✦ Օգոստոսի 28-ին Ենայում կայանալիք սօցիալ-դեմօկրատների կուսակցական համագումարում սպասվում են բուռն վիճաբանութիւններ: Նախընտրական ագիտացիայի առիթով զեկուցում կը կարդայ Ա. Բեբելը:

✦ Լոնդոնի երկաթուղային բանւորների տրամադրութիւնը շատ յուզումնալից է: Երկիւղ են կրում, որ գործադուլը կը վերսկսվի հարաւ-արևելեան, հիւսիս-արևմտեան և կենտրոնական երկաթուղագծերի վրա:

✦ Անգլիայի համայնքների պալատը մի բանաձև ընդունեց, որով ցանկալի է համարվում, որ պատգամաւորներին տարեկան 400 ֆունտ ստերլինգ ռոճիկ տրվի:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

3 օգոստոսի

ԱՍՏԱՐՍԿ: Վեց զինված մարդիկ յարձակվեցին Շիշլեանիկովի և Շիգաեվայի հանքերի վրա և յափշտակեցին 9000 ր. դրամ և ոսկի:

ՏՕԿԻՕ: Կայացաւ վերանորոգված ռուսաճապոնական ընկ. բազմամարդ ժողովը: Ներկայ էին պարլամենտի անդամները:

ՉԻԿԱԳՕ: Օդագնաց Բաջէրը ընկաւ աէրօպլանից և մեռաւ: Օդագնաց Ջոնստոնը ընկաւ Միչիգան լիճը և խեղդվեց:

ԼԻԲԱՎԱ: Կարկտախառն փոթորկից և հեղեղից յետոյ գտնվեցին մի քանի դիակներ, ձկնորսական նաւակներ՝ առանց ձկնորսների:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պետերհօֆի պալատում կայսրին ներկայացաւ և յանձնեց իր հաւատարմաթղթերը չինական կառավարութեան լիազօր Լուցզէնսիանը:

ՎԻԷՆՆԱ: Խօլերայից մեռաւ 1 կին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հակաժանտախտային մասնաժողովը 68,670 ր. յատկացրեց Չիտա քաղաքում բակտէրիօլոգիական լաբօրատօրիայի շինութիւն կառուցանելու համար:

«Կանանց ինստիտուտի ունկնդրուհիների գլխովին արտաքսումն» յօդուածի համար «Рѣчь» լրագիրը ենթարկվեց 300 ր. տուգանքի:

ՎԻԷՆՆԱ: Չեզոքացրին խօլերայի կասկածելի նշաններով հիւանդացած 15 մարդու:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ: Վերխնի Տօկմակ և Նելգօվկա կայարանների միջև գծի փչանալու պատճառով գծից դուրս եկաւ գնացքը: Ջարդվեցին 14 վագոններ, ջարդուածքներ ստացան 28 մարդ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթեւեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ № 2 գնացքը**՝ 9 ժ. 38 ր. առաւօտ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցեր., Եվլախ՝ 4 ժ. 20 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բագու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.: **Պոստաւոր № 4 գնացքը** 12 ժ. 36 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 8 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եվլախ՝ 3 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բագու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.: **Մարդատար № 6 գնացքը**՝ 3 ժ. 34 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 57 ր. երեկ., Եվլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր.՝ Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.: **Խառն գնացքը**՝ IV կարգի վագոններով ըստ հարկի կարեւորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եվլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր., Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 44 ր. առ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **պոստաւոր № 74/75**՝ 1 ժ. գիշ. Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալեքսանդրոպոլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար. 5 ժ. 7 ր. երեկ., Ուլուխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երեւան մտնելու): Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը ուղևորվում է Երեւան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երեւան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ: **Մարդատար-ապրանքատար № 78/79 գնացքը**՝ 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ, Ալեքսանդրոպոլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 9 ժ. 45 ր. առաւ., Երևան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և սրանից դէնը այլևս չէ գնում:

ԲԱԹՈՒՄ՝ **արագ. № 1 գնացքը**՝ 11 ժ. 8 ր. գիշ., Միխայլովո է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ: **Պոստաւոր № 3 գնացքը**՝ 10 ժ. 47 ր. առ., Միխայլովո է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում՝ 12 ժ. 35 ր. գիշ.: **Մարդատար № 5 գնացքը**՝ 5 ժ. 15 ր. երեկ., Միխայլովո է հասնում 9 ժ. 27 ր., երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով ըստ հարկի կարեւորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Միխայլովո է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյեան:

ԲՈՐԺՈՄ՝ **մարդատար № 7/8 գնացքը**՝ 8 ժ. 18 ր. առաւօտ., Գօրի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բորժոմ՝ 1 ժ. 38 ր. ցերեկ.: **Մարդատար № 9/10 գնացքը**՝ 3 ժ. ցերեկ., Գօրի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բորժոմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյեան:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **մարդատար № 5 գնացքը**՝ 4 ժ. 25 ր. ցերեկ.: **Պոստաւոր № 3 գնացքը**՝ 9 ժ. 52 ր. առ.: **Արագ № 1 գնացքը**՝ 10 ժ. 24 ր. երեկ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 9 ժ. 5 ր. երեկ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պոստաւոր № 72/73 գնացքը**՝ 7 ժ. 38 առաւօտ.: **Մարդատար-ապրանքատար՝ № 80/81 գնացքը**՝ 1 ժ. 26 ր. ցերեկվայ:

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **արագ № 2 գնացքը**՝ 8 ժ. 52 ր. առաւօտեան: **Պոստաւոր № 4 գնացքը**՝ 11 ժ. 40 ր. գիշ.: **Մարդատար № 6 գնացքը**՝ 2 ժ. 54 ցերեկ. **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ:

ԲՈՐԺՈՄԻՑ՝ **Մարդատար № 9/10 գնացքը**՝ 9 ժ. 28 ր. գիշ.: **Մարդատար № 7/8 գնացքը**՝ 7 ժ. 18 ր. առաւօտեան:

Ծանօթութիւն.—Արագ գնացքներով (№ 2՝ Թիֆլիսից Բագու՝ և № 1 Բագու-Թիֆլիս) առանց վագոնը փոփոխելու կարելի է հաղորդակցել Թիֆլիս-Բագու-Ռոստով, միայն վճարելով պլացկարտի գինը:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ Գ. ԱՐԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Գ. Ց. ԳՈՒՐԳԷՆՈՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՐԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—79

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ վեներական հիւանդութիւնների:
Ընդունում է հիւանդներին՝
Առաւօտեան ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը:
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը:
Կուկիա, Սեմենովսկայա փողոց, № 16.
Տելեֆօն № 40.
(Ե.ու.կ.) 220. 100—57

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՆՉՈ՞Ւ ՈՍԿԻ

Եթէ ֆրանսիական ոսկուց շինված, բայց, ամենաուժեղ ձևի, քանդակազարդ, լուսագոյն կոնստրուկցիայի «Անկեր», շվեյցարական արտեսաի, բազմաթիւ դիպլոմների արժանացած, 40 ժամը մի անգամ լարվող «Պրիմա», րոպէ առ րոպէ ճիշդ, 6 տարով գրաւոր երաշխաւորութեամբ «րէմոնտուար» ժամացոյցները արժեն միայն 2 ր. 80 կ., 2 հատ՝ 5 ր. 30 կ.: Նոյն տեսակի փակ 100 րուբլիանոց իսկական ժամացոյցներից ոչնչով չը տարբերվող, կրկնակի ապակիով ժամացոյցները՝ 4 ր., 2 հատը՝ 7 ր. 50 կ., կանանց բաց ժամ.՝ 3 ր. 50 կ., նոյն տեսակի գեղեցիկ փականներով՝ 5 ր. 80 կ.:

Մեր ֆիրմայի կերտուածները տարածելու համար ամեն մի ժամացոյցի հետ ձրիաբար տրվում են իբրև նուէր՝ 1) գեղեցիկ նոյն տեսակ ոսկեայ շղթայ, 2) կողմնացոյց՝ բրելօկ կամ արծաթէ ոսկեջրած 84 պրոբի, 3) բժ. Կոխի ծխամորճ-զտիչ՝ ծխախոտ ու սիգար անվնաս կերպով ծխելու համար, 4) կաշւէ քսակ, որ ժամացոյցը փչանալից ազատ է պահում: Պատուէրները ուղարկվում են վերադիր վճարով, նոյնիսկ առանց գրաւականի (Սիբիր առանց գրաւականի չեն ուղարկվում), 1—4 հատի ճանապարհածախս առնվում է 50 կ.: Հասցէն՝ Варшава, Складъ часовъ О-ва «Консеквситъ» Новолипка, 10—9.

Ուշադրութիւն! Կանանց ժամացոյցի հետ տրվում է 84 պրոբի արծաթեայ մատանի էմալով:

(29 յ. 5 օգ.) (B. 54,222) 2—2

ԿՐԷՄ
„ՄԵՏԱՄՈՐՖՈԶԱ“
ԸՆԿ.
Ա. Մ. ՕՍՏՐՈՈՒՄՈՎԻ
Միանգամայն ոչնչացնում է
Պէպլեններ և Արեւակիզութիւնը
պահպանելով կաշին
այդօրինակ ազդեցութիւններից:
Պէպլեններ չունեցողներին՝
ցանկանալով պահպանել իրանց պէպլեններից՝ մենք առաջարկում ենք ԿՐԷՄ
„ԱԼԲԱԴԵՐՄԱ“
որի մի մասը մտնում է մեր ԿՐԷՄ ՄԵՏԱՄՈՐՖՈԶԱՅԻ մէջ:
Պահանջեցէք ամենուրեք:
(ու.) (M. 253940) 708. 5—5

№ 4711 ԹԱՆՁՐ ՇՊԱՐԸ (жирная пудра)

ամենաիդէալական միջոցն է ձեռք բերելու դէմքի գեղեցկագոյն գոյն. անփոխարինելի է իբրեւ շպար պարահանդէսի համար, ապօնում եւ առհասարակ ցերեկն ու գիշեր: Զարմանալի կերպով սազում է կաշուն եւ բոլորովին անվնաս է:

Սեփական շահից դրդուած գնելու ժամանակ հարկաւոր է համոզվել, որ տալիս են իսկական № 4711 թանձր շպարը:

№ 4711 օրէնքով հաստատված է:

(օգ. 26) (M. 272858) 2—1

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն:
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ:

Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster. Comptoir-ում: Նիւթերն առնվում են բէալ կեանքից: Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ) ոչ պարտադիր. 1) **Օտար լեզուներ.** 2) սղագրութիւն. 3) դակտիլլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով: Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ: Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար: Ունկնդիրների թիւը սահմանափակված է: Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը առ. 10—12 և եր. 4—7 ժամը: Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքերում:

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(Հ.ու.կ.) 738. 0—5

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.